

ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ԲՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ՀԱՅ ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՀԱՐՑԸ

Գ. Բ. ԶԱՀՈՒԿՅԱՆ

1

Հայերենի բարբառների ծագման հարցը լոկ բարբառագիտական հարց չէ. այն սերտորեն կապված է հայոց լեզվի ծագման ու ձևավորման հարցի հետ: Այդ հարցի լուծումից շատ բանով կախված է հայոց լեզվի պատմության, համեմատական ու պատմական քերականության մի շարք կարևոր հարցերի լուծումը: Այդ պատճառով էլ բնական պետք է համարել այն աշխույժ հետաքրքրությունը, որ ցուցաբերվում է սովետահայ լեզվաբանների կողմից այդ հարցի նկատմամբ: Ցավոք սրտի, հենց սկզբից հարկավոր է ասել, որ բավականաչափ պարզություն չկա վիճելի տեսակետների ձևակերպման մեջ և որ ոչ բոլոր դեպքերում են տեսակետները լրջորեն հիմնավորվում փաստական նյութով:

Հայագիտության զարգացման ժամանակակից էտապում ալլես վիճելի չպետք է համարել նախ՝ V դարում հայերենի բարբառների գոյության հարցը և հրկրորդ՝ բարբառներում այնպիսի արխայիկ գծերի առկայության հարցը, որոնք զրաբարի հուշարձաններում պահպանված գծերից ավելի հին են: Վիճելի պետք է համարել լոկ V դարի հայերենի բարբառների ծագման, բնույթի, քանակի և ժամանակակից բարբառների հետ ունեցած փոխհարաբերության հարցերը:

1) Լեզվաբանների մեծ մասը, այդ թվում Հ. Հյուբշմանը, Ա. Մելին, Հ. Աճառյանը և ուրիշները, գտնում են, որ V դարում բարբառային ուժեղ տարբերություններ չեն եղել և որ ժամանակակից բարբառային տարբերությունների հիմնական գծերը ձևավորվել են X—XI դարերից հետո: Այս տեսակետն են պաշտպանում նաև պրոֆ. պրոֆ. Է. Ազալյանը և Գ. Սևակը իրենց բանավիճալին հղվածներում:

2) Լեզվաբանների մյուս մասը՝ Գ. Պատկանյանը, Ն. Յա. Մառը, պրոֆ. Ա. Ղարիբյանը կարծում են, որ V դարում արդեն ձևավորված կերպով գոյություն են ունեցել այժմյան բարբառների դրեթե բոլոր տարբերիչ գծերը և որ ժամանակակից բարբառները եթե ոչ ամբողջովին, ապա գոնե մեծապես մասով գրաբարից հին են:

Եթե զանց առնենք առաջին տեսակետի կողմնակիցների այն թելություններն ու վրիպումները, որոնք կամ ընդհանուր են երկու ուղղությունների համար էլ և պայմանավորված են հայագիտության զարգացման

արդի մակարդակով¹, կամ բխում են ավյալ հետազոտողի մասնակի կարծիքից, ապա կարելի է ասել, որ առաջին տեսակետը հենվում է եղած զրավոր հուշարձանների մանրակրկիտ ուսումնասիրության և բարբառային մատչելի ավյալների բազմակողմանի հաշվառման վրա, մինչդեռ երկրորդ տեսակետը հիմնավորվում է որևէ յուրջ փորձ չի կատարվել. պրոֆ. Ղարիբյանն է միայն, որ փորձում է հիմնավորել այն հայերենի բարբառներից տոնված որոշ կարգի փաստերով: Այս առումով Բ. Պատկանյանի և Ն. Յա. Մառի տեսակետները կարելի է հեշտությամբ դանց անել (և ներել նրանց մոլորությունը), որովհետև Բ. Պատկանյանը ապրում էր մի շրջանում, երբ հայ գիտական բարբառագիտությունը դեռ նոր էր անում իր առաջին քայլերը և երբ հայերենի բարբառների առանձնահատկությունների ու բաշխման մասին խիստ աղոտ գաղափար կար, իսկ Ն. Յա. Մառը գատում էր ալլոբոլորի մասին ոչ թե ինքնուրույն ուսումնասիրությունների հիման վրա, այլ հենվելով գերազանցապես հայերենի իր ուսուցչի՝ Բ. Պատկանյանի կարծիքի վրա: Միայն այլ է հարցը, երբ մենք խոսում ենք պրոֆ. Ղարիբյանի հայացքների մասին:

Պրոֆ. Ա. Ղարիբյանը սովետահայ ամենտականավոր բարբառագետն է, որ հայտնի է հասկապես հայ բարբառագիտության մեջ բերած երկու կարգի նորություններով: 1) նա առաջինն է մեր բարբառագետներից ավել հայ բարբառների հնչյունական գոտակարգումը՝ բաղաձայնական սխեմայի տեղաշարժերի հիման վրա: 2) հայ բարբառների՝ Հ. Աճառյանի աված ձևաբանական գոտակարգումը նա հարստացրել է նոր ճյուղերի և բարբառների հայանարերումով: Միայն նրա բերած՝ այս երկու նորությունը, չցավոք սրտի, հաճախ զուգակցվում են բազմաթիվ սխալ ընդհանրացումների ու վրիպումների հետ: Ձիտակելով այն մասին, որ նրա և նրա որոշ հետևորդների մոտ բացակայում է ժամանակակից լեզվաբանություն մի շարք կարևոր նվաճումների քննադատական օգտագործումը (ժամանակակից փորձական հնչյունաբանություն, ժամանակակից հնչյունաբանություն, ժամանակակից լեզվաբանական աշխարհագրություն, պատմա-համեմատական հետազոտություն ժամանակակից մեթոդների, լեզվաբանական վիճակագրություն և այլն)՝ նշենք, որ պրոֆ. Ղարիբյանի լեզվաբանական-բարբառագիտական կոնցկպցիան աչքի է ընկնում անհետևողականությամբ և ընդհանուր մեթոդոլոգիական բնույթի վրիպումներով:

Պրոֆ. Ղարիբյանի բարբառագիտական գործերում հաճախ զուգորդվում են անհարիր հայացքներն ու տարրեր շրջանների պատկերացումները. պրոֆ. Ղարիբյանը, անցնելով լեզվաբանական այս կամ այն կոնցկպցիային, նախորդից բոլորովին չի հրաժարվում, այլ փորձում է այն հաշտեցնել նորի հետ. ալլոբոլ էր վիճակը «լեզվի նոր ուսմունքի» տիրապետության շրջանում (30—40-ական թվականներին), երբ պրոֆ. Ղարիբյանը Հ. Աճառյանի բարբառագիտական սկզբունքներն ու նյութերը օգտագործելով՝ գրանք հարմարեցնում է Ն. Յա. Մառի «լեզվի նոր ուսմունքի» գրություններին. շարունակելով բարբառների բաղաձայնական սխեմաները Հ. Աճառյանի նման հա-

¹ «Գրարար» տերմինի անհետևողական գործածություն, պատմա-համեմատական մեթոդի օգնությամբ բարբառային ընդհանուր նախաձևերի վերականգնման, «լլև բարբառային ձևերի առաջացման բաղաձայն ու հարաբերական ժամանակագրության սահմանելու եղանակների անբավարար օգտագործում, հայերենի ոչ-հնդեվրոպական ու կոդիֆիկացիան սուբստրատի ազդեցության անբավարար հաշվառում և այլն:

մեմատել գրաբարի բաղաձայնական սիստեմի հետ և ցույց տալով գրաբարի համեմատությունը տեղաշարժեր՝ նա միաժամանակ աշխատում էր բոլորին հավատացնել, որ բարբառների բաղաձայնական սիստեմները գրաբարի բաղաձայնական սիստեմների հետ որևէ կապ չունեն, որ դրանք միանգամայն անկախ կազմավորումներ են, որ բարբառներից Վուրաքանչյուրը կուռ սիստեմ ներկայացնող առանձին, մեր կարծիքով, ցեղական լեզվի վերապրուկ է և որ ամեն մի բարբառ իբրև սիստեմ անհիմնական է մնացել գրաբարի կենդանի լեզու կղած ժամանակաշրջանում¹։ Այդպես է վիճակը նաև «լեզվի նոր ուսմունքի» վուլգար սոցիոլոգիական սխալների հաղթահարումից հետո կողմ շրջանում, երբ իր «Հայ բարբառագիտություն» մեջ շարունակելով հայ բարբառների բաղաձայնական սիստեմների դասակարգումը կատարել ըստ գրաբարի «անհիմնական և կաշուն սիստեմի» նկատմամբ ունեցած «տեղաշարժերի»՝ միաժամանակ նա այդ «տեղաշարժերը» համեմատում է հնդեվրոպական վիճակի հետ և գտնում, որ «Հայերեն լեզվի ճյուղավորումները, բարբառների առաջանալը, տեղի են ունեցել տեղական կերպով և աստիճանաբար, հնագույն շրջանից սկսած և՛ ընդհանուր հայերենի գրաբար վիճակից առաջ, և՛ դրա գրաբար վիճակում, և՛ գրաբար վիճակից հետո»²։ Այս բոլորով հանգերձ պրոֆ. Ղարիբջանը (ինչպես ցույց է տալիս և պրոֆ. Սեալը) հարկ չի տեսնում պարզելու հնչյունական և ձևաբանական դասակարգումների փոխհարաբերությունը, հայ բարբառների ծագման մասին խոսելիս հենվում է գերազանցապես առաջինի վրա, ժամանակակից վիճակի մասին խոսելիս՝ երկրորդի վրա, մինչդեռ այդ դասակարգումները տալիս են հայ բարբառների փոխհարաբերության բավականաչափ տարբեր պատկերներ։ «Լեզվի նոր ուսմունքի» դրույթները սովետական լեզվաբանությունում մեջ իշխող արդի կարծիքների հետ մեխանիկորեն զուգորդելու փորձեր առկա են նրա վերջին բանավիճակին հովվածում։ Այսպես, օրինակ, այստեղ պրոֆ. Ղարիբջանը շարունակում է կանգնած մնալ լեզվի դասակարգանությունում մասնական գոհակցումով միայն վրա։ Բաժանական հասարակությունում մեջ ազգային լեզուն նրա կարծիքով միայն մի խավի սեփականություն է։ «Ընդհանուր ազգային լեզուն չի մնում միայն մի խավի սեփականություն, ինչպես բուրժուական հասարակարգում, — գրում է նա սոցիալիստական հասարակարգի բարձր զարգացման պայմաններում բարբառների վիճակի բնութագրման կապակցությամբ, — այլ դառնում է համաժողովրդական, խոսակցական լեզու»³։ Չխոսելով այն մասին, որ պրոֆ. Ղարիբջանն այստեղ ազգային լեզուն բուրժուական հասարակարգում համաժողովրդական լեզու չի համարում, նույնացնում է այն միայն գրավոր լեզվի հետ և կտրում է խոսակցական հիմքից, հարկ ենք համարում բերել սովետական լեզվաբանության մեջ այս հարցում արդեն տիրապետող տեսակետը. «... Ազգային լեզուն իրենից ներկայացնում է ֆունկցիոնալ-ոճական, հասարակական և տերիտորիալ տեսակետից որակապես տարբեր ձևերի բարդ ճյու-

¹ Ա. Բ. Ղարիբջան, Հայերեն բարբառների դասակարգման խնդիրը, Երևանի Պետական համալսարանի Գիտական աշխատություններ, հ. XIX, 1941, էջ 17 - 18:

² Ա. Բ. Ղարիբջան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 68:

³ Ա. Բ. Ղարիբջան, Հայ բարբառների ծագման հարցի շուրջը, «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 3, էջ 243: Հետագայում այս հոդվածի էջերը կրեթվեն տեքստում (փակագծերի մեջ):

դավաճումը սխառնում՝ լեզվի գրականորեն մշակված տիպի՝ որպես ազգային լեզվի բարձրագույն ձևի գլխավորությունը, որի կազմի մեջ դրա հետ միասին մտնում է և բանավոր-ժողովրդական խոսքի ողջ բաղադրանությունը։ Ազգային լեզվի համաժողովրդական բնույթը կայանում է նրանում, որ նա ավելի ազգի բոլոր անդամների սեփականությունն է, որոնք գործնականում օգտվում են նրա պատմականորեն պայմանավորված տարատեսակներից մի քանիսից»¹։

Պրոֆ. Ղարիբջանը լեզվի և բարբառների փոփոխության պրոցեսի մասին ունի գրեթե միևնույն հայեցակետը, ինչ Ա. Շլախերը մոտ մեկ դար առաջ։ Ինչպես հայտնի է, Ա. Շլախերը, Գ. Կուրցիուսը և ուրիշները տարբերում էին լեզվի կազմավորման և քայքայման շրջաններ։ Ըստ նրանց՝ մինչև որոշ շրջան լեզուն զարգանում և կազմավորվում է, ապա սկսվում է նրա քայքայման պրոցեսը։ Դեռ ավելին, պրոֆ. Ղարիբջանը, շարունակելով «լեզվի նոր ուսմունքի» դրույթների կիրառումը, այս հարցում Շլախերից մի բան էլ այն կողմն է անցնում. ըստ պրոֆ. Ղարիբջանի՝ բարբառների և լեզուների սխառնմանը կազմավորվելուց հետո երկար ժամանակ մնում են «անփոփոխ և կայուն» վիճակում, տպա սկսում են քայքայվել. հայ բարբառների սխառնմանի քայքայման շրջանը պրոֆ. Ղարիբջանը դնում է X—XI դարերից հետո (այսինքն՝ այն շրջանում, երբ մեր գրավոր հիշատակարանները սկսում են մասնաճանկան վկայություններ տալ գրաբարի սխառնմից հետագոյ ուղղակիան տարբերությունների մասին)։

Այս տեսակետից պատահական չպետք է համարել, որ պրոֆ. Ղարիբջանը իր բարբառագիտական «տեսությունը» հիմնավորելու համար վկայակոչում է... VIII դ. քերական Ստեփանոս Սյունեցուն, սրի համար լեզվական փոփոխությունների պրոցեսը ոչ այլ ինչ է, եթե ոչ սկզբնական աստվածալին կատարելությունից հետանալու, սկզբնական մաքրության կորուստի, քայքայման և աղավաղման պրոցես։

Պրոֆ. Ղարիբջանը գրեթե չի ընդունում լեզվի մեջ նոր որակի առաջացման հնարավորությունը, ամեն ինչ աշխատում է բխեցնել միևնույն սկզբնական վիճակից։ Ըստ պրոֆ. Ղարիբջանի, եթե մերժենք այն տեսակետը, որ հայերենի շնչեղ-ձայնեղներն անմիջապես հնդեվրոպական շրջանից չեն գալիս, ապա պետք է ընդունենք լոկ շրջապատող լեզուների ազդեցությունը. բայց շրջապատող լեզուները շնչեղ-ձայնեղներ չունեն. հետևաբար, ըստ պրոֆ. Ղարիբջանի, «հայ բարբառների շնչեղ-ձայնեղների շարքը ժառանգված է նախամայր լեզվից» (էջ 249). պրոֆ. Ղարիբջանը մոռանում է, որ նոր հնչյուններ կարող են առաջանալ և ինքնուրույն, ներքին ճանապարհով՝ առանց հնից ժառանգվելու (ինչպես ալլալ դեպքում, երբ բառասկզբի ձայնեղների շնչեղացումը ամենայն հավանականությամբ կապված է արտասանությունն սկսելիս լրացուցիչ շնչի գոյացման հետ)։

Պրոֆ. Ղարիբջանը հաշվի չի առնում, որ պատմական պրոցեսը ուղիղ վերընթաց դիմ չէ. այդ պրոցեսի առանձին տեղերում կարող են լինել և՛ կանգնառություններ, և՛ հետադարձ շարժումներ (ըստ պրոֆ. Ղարիբջանի արհամարհական արտահայտություն՝ «ատավիղմի» երևույթներ), բայց ամբողջովին վերցրած այն ձգտում է առաջ։ Բավարարվենք անգլերենի պատմությունից

¹ Вопросы советской науки. Закономерности исторического развития общенародного разговорного языка и местных диалектов. Изд. АН СССР, 1958, էջ 12։

առնված մի փաստով: Վերին անգլերենում գոյություն ունեցող կարճ [æ]-ն,— գրում է անգլերենի մասնագետներից մեկը,— XII դ. փոխվել է [a]-ի. հետագայում XVI դ. տեղի է ունեցել հակառակ փոփոխությունը՝ [a]-ի փոխվելը [æ]-ի: Այս հանգամանքը հաճախ տարակուսանք է առաջացրել, որովհետև կարծվում էր, որ այդպիսի հնչյունական անդառնալիքը «այնտեղ ու հետ» մի լեզվի սահմաններում անճշմարտաման է: Սակայն ինչպես էլ որ մենք աշխատենք մեկնաբանել այդ իսկապես արտակարգ երևույթը, ինքը փաստորոշ մի կասկած չի կարող առաջացնել¹: Իմիջիայլոց նշենք նաև, որ հնդեվրոպական *a-ն սլավոնական խմբում վերածվելով o-ի՝ հետագայում ուսուերենում նախաշեշտ դիրքում կրկին վերածվում է a-ի:

Ուսելով հայ բարբառների ծագման մասին և բնղուներով բարբառների ձևաբանական դասակարգման ճշմարտացիությունը՝ պրոֆ. Ղարիբյանը «մոռանում է» այն փաստը, որ հայ բարբառների ամենից ավելի բնորոշ ձևաբանական հատկանիշները՝ կը մասնակը և ուժով կազմվող ներկան XII—XIII դարերից առաջ չեն հանդիպում: Յուրաքանչյուր այլ ոք բնականաբար կմտածեր, որ դրանք չէին կարող մինչև XII—XIII դդ. գոյություն ունենալ բարբառների մեջ ու գեթ մի անգամ չարագոյվել V—XI դդ. տեքստերում և որ, հետևաբար, մինչև XII—XIII դդ. չի կարելի խոսել հայ բարբառների ձևաբանական խիստ տարբերությունների, նրանց ձևաբանական ժամանակակից առանձնահատկությունների արդեն ձևավորված լինելու մասին: Սակայն այսպիսի տանջանք փաստերը պրոֆ. Ղարիբյանին չեն շփոթեցնում. չէ՞ որ նա ունի իր սեփական «փաստերը» (?): «Առաջնորդվելով այն ճշմարտությամբ, թե «չկա լեզու, որ բարբառ չունենա»՝ և հենվելով մեր հավաքած փաստերի (?) վրա,— գրում է պրոֆ. Ղարիբյանը,— մենք արտառապել ենք այն կարծիքը, որ հայ միասնական ցեղի (?) քայքայումից հետո (?), հայերեն լեզվի մեջ գոյություն ունեցող բարբառային սաղմերը ակտիվացել են (?) և վերածվել բարբառային որոշակի տարրերի գեո հնագույն ժամանակներից և այն էլ, ինչպես ցույց են տալիս մեր փաստերը (?), մեր դարաշրջանից առաջ երկրորդ հազարամյակի վերջերից» (էջ 241):

Զանց առնելով հայ բարբառագիտության պատմության նախորդ շրջանի նվաճումները՝ պրոֆ. Ղարիբյանը հայտարարում է, թե «նախասովետական շրջանում պատմական բարբառագիտություն չենք ունեցել» (էջ 240): Հարց է առաջանում. իսկ Ա. Տոմսոնի «Թիֆլիս քաղաքի հայերենի պատմական քերականությունը», Լ. Մսերյանցի «Հայկական բարբառագիտությունը», Հ. Աճառյանի նախասովետական շրջանի բարբառագիտական գործերը և այլն — մի՞թե դրանք պատմական բարբառագիտության չեն վերաբերում: Դեռ ավելին, պակաս չուփով են պատմական բարբառագիտությունը վերաբերում իր իսկ պրոֆ. Ղարիբյանի բարբառագիտական գործերը, որոնց մեջ բացակայում է հետևողական պատմական վերլուծությունը և որոնց մեջ «Համեմատական հնչյունաբանություն» և «Համեմատական ձևաբանություն» բաժինները լոկ

¹ Б. И. Ильиш, История английского языка, Л., 1938, էջ 161—162:

² Իմիջիայլոց, պրոֆ. Ղարիբյանը մոռանում է, որ նախ՝ կան սակավաթիվ խոսողների ունեցող այնպիսի լեզուներ. որոնք չեն կարող բարբառներ ունենալ, երկրորդ՝ բարբառների և լեզուների սահմանները ոչ բոլոր դեպքերում են որոշ, երրորդ՝ կան բարբառային տարբերակման տարրեր աստիճաններ, և չի կարելի խոսել բոլոր լեզուների բարբառային ուժեղ տարբերակվածության մասին:

մեխանիկական համեմատություններ են՝ առանց պատմական հեռանկարի, երբեմն-երբեմն կատարվող պատմական էքսկուրսներով:

Պրոֆ. Ղարիբջանը հաճախ անհետևողականորեն է գիմում սովետական պատմագիտության մեջ միանգամայն որոշակի գործածություն ունեցող այնպիսի տերմինների, ինչպիսիք են ժողովուրդ (народ), տոհմ, ցեղ, էթնոս (народность): Հնդեվրոպական հիմնալեզվով, նրա տարբեր բարբառներով խոսող ցեղերը նախքան արոհման պրոցեսի ուժեղացումը մեկ միասնական «նախամայր ցեղ» (էջ 240) չէին կազմում, ինչպես կարծում է պրոֆ. Ղարիբջանը, որը նկարագրելով Հ. Աճառյանի տեսակետը, խոսում է «հայ ժողովրդի» նախամայր ցեղից անջատվելու մասին» (էջ 240): Իհի հետո պրոֆ. Ղարիբջանը գրում է «հայ միասնական ցեղի քաղաքական» մասին (էջ 241): Ավելի ստորև, մոռանալով իր գործածած տերմինների մասին, պրոֆ. Ղարիբջանը գրում է. «Դեռ հազարամյակի վերջերին մեր թվարկությունից— (իմա՝ թվագրությունից—Գ. Ջ.) առաջ հայ առանձին ցեղեր կամ նրանց ամբողջական հատվածները անցնում էին Եփրատը, կուտակվում Աղձնիքում—Ծոփքում և ավելի հարավ...» (էջ 260). ապա՝ IX—VII դդ. «հայ ժողովուրդը դեռ չկար, կային ամբողջ Հայաստանում սփռված տոհմեր ու ցեղեր, որոնց հարեանները, բնիկ թե եկվոր, այլալեզու ցեղեր էին» (էջ 261):

Ցեղախմբերի և ժողովուրդների կազմավորման պրոցեսը պրոֆ. Ղարիբջանը պատկերացնում է որպես մեխանիկական միավորման պրոցես՝ առանց ներքին փոխազդեցություն. պրոֆ. Ղարիբջանի պատկերացմամբ ցեղախմբերի և նույնիսկ ժողովուրդների (էթնոսների) կազմում միավորված ցեղերը խոսում են իրարից լիովին տարբեր բարբառներով. պրոֆ. Ղարիբջանը շեշտը դնում է տարբերության վրա՝ մոռանալով ընդհանրության մասին, այն մասին, որ ցեղախմբի և ապա էթնոսների կազմում գտնվող ցեղերը կարող են խոսել շատ մոտ բարբառներով, որոնց միավորումը առանձին զգալիություն չի ներկայացնում:

Պրոֆ. Ղարիբջանը հայ ժողովրդի սկզբնական պատմությունը պատկերացնում է լուրջորինակ կերպով. աշխատելով ժամանակակից բարբառների գրեթե բոլոր տարբերությունները բխեցնել նախկին ցեղալիքի բարբառներից՝ նա առաջ է քաշում այն «տեսությունը», թե հայերը մ. թ. ա. II հազարամյակի վերջերին Հայաստանի տերիտորիայում տարածվել են «առանձին ցեղերով կամ նրանց ամբողջական հատվածներով», թե իբր «այսպես հարյուրավոր տարիների ընթացքում հայերը ֆիզիկապես մեկուսացված առանձին խմբերով ցրված էին Ուրարտուի ամբողջ տերիտորիայում» (էջ 260), թե «երբ հայերի ղլխավոր ուժերը IX—VIII—VII դարերում անցան Եփրատը, նրանք ամենուրեք գտան իրենց լեզվով խոսողների, այդ պատճառով էլ Հայաստանի տերիտորիայի խաղաղ նվաճումը տեղի ունեցավ բավական արագ: Այստեղ ես մենք նկատի չունենք, որ մի մասսայական ժողովուրդ մասսայորեն (?) և զենքով տիրեց երկրին, այլ այն, որ նորեկ հայկական առանձին ցեղեր բնակություն հաստատեցին Ուրարտուի (հետագայում պարսկական սատրապությունների) զանազան մասերում, կամ անցյալներում եկած հայերի կոլեկտիվների կամ տեղական բնիկ ցեղերի կողքին: Հայ ժողովուրդը դեռ չկար, կային ամբողջ Հայաստանում սփռված տոհմեր ու ցեղեր, որոնց հարեանները, բնիկ թե եկվոր, այլալեզու ցեղեր էին» (էջ 261): Անհասկանալի է, թե ինչպե՞ս էին հայկական այս ցածուցրիվ ցեղերը կարողանում

առանց դիմադրության բնակություն հաստատել ցանկացած վայրում, ինչպես էին կարողանում հեշտությամբ դիմանալ օտարալեզու ցեղերի շրջապատում, ինչպես կարողացան դառնալ իշխող զանգվածը ողջ հայկական բարձրավանդակում և իր մեջ լուծել տեղական ցեղերը:

Թե որ չափով է պրոֆ. Ղարիբյանն անտեսում հայ ժողովրդի պատմության այն փաստերը, որոնք չեն մերվում իր «տեսությունը», երևում է հետևյալ օրինակից. ինչպես հայտնի է, հայ ժողովրդի ամենից ավելի ուժեղ մասնատման պրոցեսը կապված է X դարից հետո հայ ժողովրդի տնտեսական և քաղաքական իրադրության հետ, ֆեոդալական մասնատվածության պրոցեսի և հայերի մասսայական զաղթների հետ. հասկանալի է, որ այս պրոցեսը չէր կարող մեծ չափով չաղդել հայերենի բարբառային տարբերությունների աննախընթաց ուժեղացման, նոր բարբառային դժերի և բարբառների նոր փոխհարաբերության առաջացման վրա. սակայն պրոֆ. Ղարիբյանը հակառակն է կարծում. նրա կարծիքով «բարբառներն իրենց բաղաձայնական համակարգով կալուեն ու հաստատուն են եղել մինչև X դարը: Ուրեմն նրանք եղել են մինչև X դարը, որից հետո սկսվել է նրանց, իբրև բարբառների, քայքայման, վերանալու դանդաղ պրոցեսը» (էջ 247):

Պրոֆ. Ղարիբյանը բարբառների բաղաձայնական սիստեմի մինչև X դ. ունեցած կալուենության ապացույց է համարում այն հանգամանքը, որ մինչև այդ կատարված փոխառություններում այլ լեզուների ձայնեղները փոխվում են շնչեղ-ձայնեղների, մինչդեռ X դարից հետո կատարված փոխառություններում մնում են անփոփոխ. չդիտես թե այդ ինչ զերբնական ուժ է ստիպել բարբառներին մինչև X դ. իրանական և այլ կարգի մասսայական փոխառությունները փոփոխել, ենթարկել իրենց բաղաձայնական սիստեմի փոփոխություններին, ձայնեղները դարձնել շնչեղ-ձայնեղ, իսկ X դարից հետո կորցնել այդ ուժը և փոխառությունների ձայնեղները թողնել ձայնեղ. իհարկե, ճիշտ է, որ եթե բառասկզբում բարբառն ունենար միայն շնչեղ-ձայնեղ և ձայնեղ չունենար, ապա փոխառությունների մեջ ձայնեղները կվերածվեր շնչեղ-ձայնեղների. բայց ինչու չէր կարող այդ բանը տեղի ունենալ և X դարից հետո, երբ բարբառների ուժեղացման համար պատմական ավելի նպաստավոր պայմաններ կային. եթե բարբառների սիստեմը կարող էր փոխվել փոխառությունների ազդեցությամբ, ապա ինչու չէր կարող փոխվել X դարից առաջ. հասկանալի է, որ այս երևույթը բացատրվում է բառասկզբի ձայնեղների շնչեղացման պրոցեսի՝ X դարից հետո կատարվելու փաստով, մի պրոցես, որին բնականաբար ենթարկվել են մինչև այդ կատարված բոլոր փոխառությունները. օրենքի դործողության դադարելուց և բոլոր բառերն ընդգրկելուց հետո բարբառների նոր փոխառությունների բառասկզբի ձայնեղները կամ ենթարկվել են շնչեղացման՝ ըստ բարբառի ընդհանուր հատկությունների (համառ. Հ. Մկրտչյանի տվյալները կարճ բարբառում թուրքական փոխառությունների ձայնեղների շնչեղանալու մասին), կամ մնացել են անփոփոխ՝ ստեղծելով բառասկզբային ձայնեղների կարգը. թե ինչու է այս պրոցեսը տարբեր բարբառներում տարբեր ձևով արտահայտվել, այդ առանձին ուսումնասիրության հարց է: Եթե անուամենայնիվ լիովին հնարավոր է, որ բառասկզբում միայն շնչեղ-ձայնեղներ ունեցող բարբառները փոխառությունների ձայնեղները վերածեն շնչեղ-ձայնեղների, ապա բոլորովին էլ պարզ չէ, ինչպես կարծում է պրոֆ. Ղարիբյանը, թե ինչու պետք է բառասկզբում և՛ ձայնեղներ և՛ շնչեղ-ձայնեղ-

ներ ունեցող բարբառները ձայնեղները դարձնելին շնչեղ-ձայնեղներ. «նվ պարզ է (???), — գրում է պրոֆ. Ղարիբյանը, — եթե վերցնում են բառը ձայնեղով, պիտի արտասանեն շնչեղ-ձայնեղ, եթե վերցնում են խուլով, պիտի արտասանեն ձայնեղով, որովհետև ձայնեղի և խուլի մեջ եղած տարբերությունը պետք է արտահայտեն իրենց արտասանական բազայի հնարավորություններով» (էջ 246): Եթե հավատանք պրոֆ. Ղարիբյանին, որը որևէ օրինակ չի բերում (և չի էլ կարող բերել), ապա ժամանակակից հայերենի պարզ խուլերը և շնչեղ-խուլերը ուսաները պետք է փոխառությունների մեջ տարբերեն՝ վերածելով խուլերը ձայնեղների և շնչեղ-խուլերը՝ պարզ խուլերի. մինչդեռ ոչ մի այդպիսի բան տեղի չի ունենում. ուսաները հայերենի և՛ խուլերը, և՛ շնչեղ-խուլերը արտահայտում են միևնույն խուլերով, որովհետև նրանք այդ հնչյուններն ընկալում են միատեսակ (հմտ. Тигран, Паруйр և Татевос, Пайлак). այսպես էլ Արարիկի, Ակնա և այլ բարբառների ներկայացուցիչները փոխառությունների բառակազմերին և՛ խուլերը, և՛ ձայնեղները կարտահայտեն միայն իրեն ձայնեղ: Պրոֆ. Ղարիբյանի՝ աղբյուրներից առնված օրինակը խոսում է հենց իր դեմ. աղբյուրները p, t, k խուլներն արտասանում են շնչեղ-խուլ (ph, th, kh) այն պարզ պատճառով, որ պարզ խուլեր չունեն, իսկ ինչու պետք է ձայնեղ ունեցող հայ բարբառները ձայնեղները դարձնեն շնչեղ-ձայնեղ: Հասկանալի է, որ հին (մինչև X—XII դդ. կատարված) փոխառությունների մեջ խուլերի ձայնեղ և ձայնեղների՝ շնչեղ-ձայնեղ դառնալու պրոցեսը կապված է որոշ բարբառներում բառակազմի խուլերի՝ X—XII դարերից սկսած ձայնեղ և ձայնեղների՝ շնչեղ-ձայնեղ դառնալու ընդհանուր պրոցեսի հետ, որին բնականաբար ենթարկվել են տվյալ բարբառներում մինչ այդ առկա բոլոր բառերը:

Այս ընդհանուր դիտողություններից հետո անցնենք պրոֆ. Ղարիբյանի «տեսություն» ու դրա հավաստման համար բերած փաստերի վերլուծությանը:

2

Հայ բարբառների ծագման հարցը սերտորեն կապված լինելով հայոց լեզվի ծագման հարցի հետ, պահանջում է խստորեն հաշվի առնել հնդեվրոպական լեզուների և հայերենի համեմատական քերականության տվյալները: Այնինչ պրոֆ. Ղարիբյանի՝ այս բնագավառին վերաբերող մտքերը ընթերցողին թողնում են տարակուսանքի մեջ:

Պրոֆ. Ա. Ղարիբյանը զանց է առնում հնդեվրոպական շնչեղ-ձայնեղ բաղաձայնների (*bh, *dh, *gh, *gʷh) շուրջը տարվող վեճերը, և եթե մի կողմից՝ հայոց լեզվի համեմատական քերականության հիմունքները խախտում է առանց որևէ պատշաճ հիմքի, ապա մյուս կողմից՝ հնդեվրոպական հիմնական լեզվի և նրա շնչեղ-ձայնեղների հարցին խիստ քարացած մոտեցում ունի. նա հնդեվրոպական նախալեզվի և նրա շնչեղ-ձայնեղների մասին խոսում է այնպես, ինչպես ընդունված էր Բոպպի և Նլախերի ժամանակներում:

Հայտնի է, որ հնդեվրոպական շնչեղ-ձայնեղները հանդիպում են միայն հնդկական լեզուներում և չկան նույնիսկ նրանց ամենամոտ մերձավոր այնպիսի լեզուներում, ինչպիսիք իրանական լեզուներն են: Այս հանգամանքը բնականաբար լեզվաբաններին մտածել է տվել, թե միայն հնդկական խմբի հիման վրա վերականգնվող այդ պայթականների շարքը իրոք հնդեվրոպական

հիմնալեզվում եղել է, թե արդյունք է հնդկականի վրա շրջակա լեզուների ազդեցություն: Լեզվաբանների մի նշանակալից թիվ կարծում է, որ այդ հնչյունները արդյունք են տիրեթա-րիրմանական և դրավիդյան լեզուների սուբստրատային ազդեցության. ինչպես հայտնի է, այդ լեզուները մինչև այժմ էլ շրջապատում են Հնդկաստանի հնդեվրոպական լեզուները, և նրանցով խոսողները մասամբ ասիմիլացիայի են ենթարկվել հնդեվրոպական ցեղերի կողմից: Այս կարծիքը հավանական է համարվում մանավանդ այն պատճառով, որ շնչեղ-ձայնեղները սանսկրիտում հանդիպում են որոշ էմֆատիկ բառերում և անդական բնիկների լեզուներից կատարված փոխառություններում¹: Պրոֆ. Աղաջանին խորհարդ տալով զգուշ լինել Շրենդհանուր հայտարարությունների անելուց (sic)» (էջ 246), պրոֆ. Ղարիբջանը քիչ հետո մոտանում է ամեն մի զգուշություն՝ գրելով: «Հետևյալը. «Արդ, մենք պնդում ենք, որ հայ բարբառներում գոյություն ունեցող շնչեղ-ձայնեղների համակարգը ժառանգված է նախամալր լեզվից, որ միակ լեզուն է աշխարհում (?), որ ունեցել է այդ համակարգը» (էջ 249): Մենք չենք խոսում այն մասին, որ եթե հնդեվրոպական նախալեզուն բոլորովին չունենար շնչեղ-ձայնեղներ և եթե հնդկական լեզուներին շրջապատող լեզուները նույնպես դուրկ լինեին այդ հնչյուններից, ապա հնդկական լեզուները կարող էին դրանք ձևով բերել ինքնուրույն ճանապարհով (համա. հատկապես էմֆատիկ բառերում հանդիպելը)» պրոֆ. Ղարիբջանը կարծում է, թե լեզվի մեջ նորագոյացումները կամ միայն ազդեցությամբ են առաջանում, կամ հենց սկզբից գոյություն ունեն:

Լեզվաբանական գրականության մեջ վեճերի տեղիք է տալիս նաև այն հարցը, թե ինչպես էին արտասանվում պալմանականորեն արադիցիոն կերպով *bhi, *dh, *g^hi, *g^wh նշաններով արվող հնդեվրոպական հնչյունները. կան լեզվաբաններ, որոնց կարծիքով այդ բաղաձայնները դեռևս հնդեվրոպական շրջանում հնչում էին ինչպես հունարենում (φ, δ, γ). ըստ ոմանց էլ հնդեվրոպականում եղել է ձայնեղ շփականների շարք:

Վերջապես հայտնի է, որ հնդեվրոպական հիմնալեզուն մի մոնոլիտ ամբողջություն չի եղել. նրա մեջ կալին տարբեր տարածում ստացած երևույթներ: Ֆրանսիացի լեզվաբան Ֆուրկեն² փորձելով հաղթահարել եղած դժվարությունները, տարբերել է հնդեվրոպական հիմնալեզվի երկու արևալ, որոնցից մեկում (հնդիրանա-բալթիկա-սլավոնա-հայա-գերմանա-կելտականում) ըստ նրա, տարածված են եղել շնչեղ-ձայնեղները, մյուսում (հունա-իտալականում)³ շնչեղ-խուլները. ըստ Ֆուրկենի՝ հայերենը դուրս է եկել առաջին արևալից, ընդ որում նախքան լիովին առանձնանալը գերմանականի հետ միասին ենթարկվել է բաղաձայնների գերմանա-հայկական ընդհանուր տեղաշարժին (շնչեղ-ձայնեղների շնչեղության կորուստ, ձայնեղների խլացում, շնչեղ-խուլների պահպանում):

Վերևում ասվածները վկայում են հարցի դժվարությունների մասին, դժվարությունների, որոնք պրոֆ. Ղարիբջանի համար գոյություն չունեն: Նրան շնչեղ-ձայնեղների անվերապահ վերագրումը հնդեվրոպական հիմնալեզվին դա-

¹ Համա. դիցուք Յ. Прокош, Сравнительная грамматика германских языков, 1954, էջ 29, այլև 351-րդ էջի ժանոթագրությունը Գոլմանի կողմից:

² Y. Fourquet, Les mutations consonantiques du germanique, 1948:

լիս է այն շրջանից, երբ սանսկրիտը իր բազմառանցական սիստեմով հանդերձ զիջում էր որպես հիմնական լեզու, և հնդեվրոպական հիմնալեզվի հատկությունները ձևավորվում էին նրա օրինակով:

Հնդեվրոպական լեզուների կառուցվածքի ուսումնասիրողը նկատում է հետևյալը. որքան ավելի ենք զննում ժամանակակից վիճակից ղեպի հինը, այնքան պակասում են վերլուծական և կցական ու անջատական տարրերը, և ուժեղանում է համադրականությունը, մեծանում թեքականությունը: Արդի ֆրանսերենը և անգլերենը տիպիկ վերլուծական լեզուներ են, մինչդեռ ժողովրդական լատիներենը և հին անգլերենը ունեն ուժեղ համադրականություն: Ժամանակակից բուլղարերենում, հունարենում, հայերենում, պարսկերենում և այլ լեզուներում մեծ թիվ են կազմում վերլուծական տարրերը, և չկան այնպիսի համադրականություն ու թեքականություն, ինչպես հին սլավոներենում, հին հունարենում, հին հայերենում (գրաբարում), հին պարսկերենում և այլն: Այստեղից բնականաբար կարելի է անել այն եզրակացությունը, որ թեքականությունը և համադրականությունը խիստ ուժեղ են արտահայտված եղել այդ լեզուների ամենից ավելի հնագույն վիճակը ներկայացնող հնդեվրոպական հիմնալեզվում: Հասկանալի է, որ որքան ավելի ուժեղ է թեքականությունը և համադրականությունը հնդեվրոպական որևէ լեզվում, այնքան ավելի է այդ լեզուն մոտ հին վիճակին. այս տեսակետից կասկած չի կարող լինել գրաբարի՝ բարբառներից ավելի հին վիճակ ներկայացնելու մասին: Սակայն պրոֆ. Ղարիբջանը այդպես չի կարծում: Եկատի չառնելով լեզվի մեջ որակական փոփոխությունների հնարավորությունը՝ նա կարծում է, թե հնդեվրոպական լեզուների վերլուծական ձևերն ընդհանրապես գալիս են «նախամայր լեզվից»։ «Չի կարելի պնդել (?), — գրում է նա, — թե հնդեվրոպական նախալեզուն ունեցել է միայն համադրական կառուցվածք: Հնդեվրոպական նախամայր լեզվի բայական կառուցվածքի մեջ եղել են և՛ համադրական ձևեր, և՛ վերլուծական ձևեր, այդ ձևերը ժառանգվել են հաջորդների կողմից, և որոշ լեզուներ զարգացրել են համադրական կառուցվածքը, իսկ որոշ լեզուներ էլ՝ վերլուծական կառուցվածքը» (էջ 258): Պրոֆ. Ա. Ղարիբջանը չափազանցնում է հնդեվրոպական հիմնալեզվի վերլուծական տարրերի կշիռը և ընդհանրապես լռում է այն մասին, որ խոսքը չափի մասին է: Ինչպես երևում է այս կապակցությամբ վերալսելու կազմվող ժամանակաշին ձևերի մասին պրոֆ. Ղարիբջանի արած դատողություններից, նա հաշվի չի առնում ոչ վերականգնելու, ոչ էլ հնդեվրոպական լեզուների որոշ կարգի ընդհանրությունների՝ անկախ զարգացման, երբեմն էլ հնդեվրոպական բարբառային ընդհանրության արդյունք լինելու հնարավորությունը: Գալով դերբայներով կազմվող ձևերի հնությունը հարցին՝ պետք է նշենք, որ նախ՝ հայերենի բարբառների գերբայներով կազմվող (-ում-ով, -իս-ով, -ած-ով և այլն) ժամանակաշին ձևերից հավանաբար միայն -ել-ով ձևերն են (վաղակատարը), որ հնդեվրոպական սաղմեր ունեն, բայց դրանք էլ իրենց հիմքերն ունեն գրաբարում արձանագրված -ել-ով (գրելալ և > գրել և) ձևերի մեջ. երկրորդ՝ այստեղ էլ -նալ-ը ակնհայտորեն ավելի հին է (ծագում է — *isā-lo-ից), քան ել-ը, որ ծագում է նախորդից սովորական հնչյունափոխությամբ (հմմտ. գորևան > ցորևն, լեարդ > լերդ և այլն). երրորդ՝ գրաբարում պահպանվել է գերբայական կազմիչի հին հիմքակազմ ու տարրը (գրնալ, սևո. գոնալ), որ արտացոլում է հնդեվրոպական

-o-ով հիմքը (-lo-), մինչդեռ բարբառներից ոչ մեկը այդ ուն չի պահպանել (ընդհանրապես բարբառներում վաղակատարը դարձել է լոկ ժամանակների կազմիչ և չի հոլովվում, մինչդեռ դրաբարում այդպես չէր):

Իր հոգվածներում պրոֆ. Ղարիբյանը հանդես է գալիս այսպես կոչված առաջին և երկրորդ իմաստավորման օրենքների զաղափարով, որոնց ճիշտ մասը վաղուց է հայտնի, իսկ մնացած մասը հիմնված է փաստերի անտեսման կամ դրանց յուրօրինակ մեկնաբանության վրա: Վաճառի որ 1950 թ. գրած իր հոգվածի¹ դրույթները պրոֆ. Ղարիբյանը համառոտակի շարադրում է բանավիճալին «Հայ բարբառների ծագման հարցի շուրջը» հոգվածում, ուստի և մեզ իրավունք ենք վերապահում գիմել վերջինիս. «Հայտնի է, — գրում է պրոֆ. Ղարիբյանը, — որ հնդեվրոպական նախամայր լեզվի ձևաբանական կառուցվածքը եղել է երկձևույթ, ըստ որում, բառի մեջ գիտակցվել է որպես հիմք, որպես հիմնական ձևույթ, և վերջավորություն, որպես երկրորդական քերականական ձևույթ. օրինակ՝ vedo-bis* (գետով): Բառահիմքն ունեցել է ձայնավոր վերջավորություն (ուզում է ասել վերջանում է ձայնավորով—Գ. Զ.), իսկ բաղաձայն վերջավորություն ունենալու դեպքում՝ քերականական վերջավորություններն իրեն կցելու համար հաճախ ստացել է թեմատիկ ձայնավոր» (էջ 254—255): Եթե չհոսենք այն մասին, որ նախադասություններն այստեղ ձևակերպված են խիստ անփուլ լերպով և որ *vedobhis ձևը տառադարձման ենթարկելիս ու մեկնաբանելիս թույլ են տրված սխալներ, որոնք անհանդուրժելի են համեմատական քերականությանը նվիրված գործերում (աստղանիշը գրված է բառից հետո, փոխանակ սկզբում գրվելու, այնքան կարևոր համարելով շնչեղ-ձայնեղները՝ պրոֆ. Ղարիբյանը մոռանում է շնչեղությունը նշանակել և վերջապես հնդեվրոպական հոգնակի ձևի գիմաց բերում է եզակի ձևը), — ապա կարելի է նշել, որ այստեղ որքան միտք կա. այնքան սխալներ կան: 1) Լեզվաբանության մեջ, հատկապես սովետական լեզվաբանության մեջ ձևույթ բառը որոշակի գործածություն ունի. այն նշանակում է լեզվական վերլուծության նվազագույն իմաստավոր միավորը. այս առումով հնդեվրոպական բառը կարող էր և՛ միաձևույթ, և երկձևույթ, և՛ բազմաձևույթ լինել. վերջինիս համար հմտ. բառը և ածանցավոր բառերի առկայությունը, բնդ որում, ինչպես հայտնի է, հնդեվրոպական հիմնալեզուն ուներ առաջնային և երկրորդային ածանցներ, որոնցից վերջինները բառեր էին կազմում արդեն ածանցված բառերից: Մեկն նույնիսկ գրում է, թե «բառը կարող է ունենալ անասհամանափակ թվով վերջածանցներ»²: 2) Ենթադրենք, թե պրոֆ. Ղարիբյանը ձևույթներն ասելով նախանում է բառի՝ հիմնական ձևաբանական կազմիչները՝ անկախ դրանց քանակից. սակայն այս դեպքում էլ նրա ասածը ոչ մի կերպ ճիշտ լինել չի կարող. այս ձևով եթե դասենք, ապա հնդեվրոպական բառը ոչ թե «երկձևույթ» է, այլ «եռաձևույթ»։ «Հնդեվրոպական բառը պարունակում է, — գրում է նույն Մեյեն, — երեք մաս՝ սրմատ, վերջածանց և վերջավորություն, որոնցից յուրաքանչյուրը խաղում է հատուկ դեր. արմատը ցույց է տալիս բառի ընդհանուր իմաստը, ածանցը այն որոշում է ավելի ճշգրտորեն,

¹ Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», (հաս. գիտ.), 1953, № 8:

² А. Мейе, Введение в сравнительное изучение индоевропейских языков, М.—Л., 1938, էջ 172:

իսկ վերջավորությունը (ձայնավորների հերթագայություն և տոնի բարձրացման տեղի հետ միասին) որոշում է բառի տեղը նախադասության մեջ: 3) Թերևս պրոֆ. Ղարիբյանը կարող է դարձյալ առարկել, թե ինքը նկատի ունի արմատն ու վերջածանցը (երբեմն զրո վերջածանցը) միասին վերցրած որպես հիմք՝ մի կողմից և վերջավորությունը՝ մյուս կողմից. այլ կերպ ասած՝ հիմքը հնդեվրոպական հիմնալեզվում՝ պրոֆ. Ղարիբյանի կարծիքով մեկ անվերլուծելի ամբողջություն է եղել հիմքակազմ ձայնավորով հանդերձ, և հիմքակազմ ձայնավորը իրեն այդպիսին չի ըմբռնվել. սակայն այս էլ ճիշտ չէ, որովհետև հիմքակազմ *e/o տարրը գիտակցվել է որպես այդպիսին. նրա առկայությունը և բացակայությունը հակադրվում էին իրար թեմատիկ և աթեմատիկ հիմքերը՝ ձևաբանական այլ կարգի տարբերություններով հանդերձ. բանն այն է, որ *e/o-ն հնդեվրոպական հիմնալեզվում պատկանում էր հիմքին, հին հայերենում (գրաբարում) փոքր ինչ ավելի է անկախանում, իսկ բարբառներում և ժամանակակից գրական լեզվում անցնում է վերջավորությանը. այս դեպքում էլ ճիշտ չպետք է համարել գրաբարը ավելի կատարյալ թեքական համարելը, քան հնդեվրոպական (?) հունարեն և լատիներեն լեզուները, ինչպես անում է պրոֆ. Ղարիբյանը. եթե թեքականության աստիճանը որոշվում է կազմիչների սերտություն աստիճանով, ապա գրաբարը չի կարող հիշված լեզուներից ավելի թեքական համարվել: 4) Ընչպես հայտնի է, հնդեվրոպական բառահիմքերը լինում էին թեմատիկ, եթե վերջանում էին *e/o-ով, և աթեմատիկ, եթե վերջանում էին բաղաձայնով կամ ձայնորդով (ներառյալ նաև i-ն և u-ն. որոնք հետագայում դադարում են իրեն ձայնորդի դիրքային տարբերակներ ըմբռնվելուց և դառնում են անկախ ձայնավորներ). հատուկ տիպ էին կազմում *a-ով (*ē-ով) վերջացող հիմքերը՝ ավելի շուտ մոտենալով աթեմատիկ հիմքերին: Առանց հաշվի առնելու այս ճշմարտությունները՝ պրոֆ. Ղարիբյանը գրում է, թե ճրատահիմքն ունեցել է ձայնավոր վերջավորություն (?) , իսկ բաղաձայն վերջավորություն ունենալու դեպքում (?)՝ քերականական վերջավորություններն իրեն կցելու համար հաճախ ստացել է թեմատիկ ձայնավոր: Եթե չասենք, որ հնդեվրոպական հիմքերի տարբերության այսպիսի անուշադիր նկարագրությունը անհանդուրժելի է համեմատական քերականության տարրական հիմքերը մատուցելիս, ապա չի կարելի չնշել, որ բացի այլ հատկանիշներից, նախ՝ հնդեվրոպական թեմատիկ և աթեմատիկ հիմքերը տարբերվում էին իրենց ստացած վերջավորություններով և երկրորդ՝ հիմքակազմ (թեմատիկ) ձայնավորները հաճախ սերտորեն ձուլվում էին վերջավորությունների հետ (հակառակ պրոֆ. Ղարիբյանի երկնությունության և թեմատիկության սկզբունքների՝ դժվարացնելով հիմքերի և վերջավորությունների սահմանազատումը):

Իր հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ՝ աշխատության մեջ (1958) պրոֆ. Ղարիբյանը առանց որևէ վերապահության, ամենայն վրստահությամբ խոսում է այն մասին, որ հնդեվրոպական նախալեզուն ուներ 18 երկրաբառ, երեք երկար և երեք կարճ ձայնավոր: Այս կապակցությամբ նշենք, որ՝ նախ՝ վերականգնումների բացարձակ հավաստիության մասին խոսք լինել չի կարող, մանավանդ որ հնդեվրոպական հիմնալեզուն (կամ նա-

¹ Ա. ր. Ղարիբյան, Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ, Երևան 1958, էջ 10:

խաղեղուն) նույնպես փոփոխություն ենթակա և տերիտորիալ տարբերակումներ ունեցող մի ամբողջություն է եղել: Երկրորդ՝ հնդեվրոպական նախալեզվի համար վերականգնում են բացի կարճ վանկարար բաղադրիչ (e, o, a) ունեցող երկրաբառներից նաև երկար բաղադրիչ (e, o, a,) ունեցող երկրաբառներ (*ēu, *ēn, *ēm, *ēr և այլն.)՝ հենվելով հատկապես հնդ-իրանական և հունական համապատասխանությունների վրա. այսպիսով, ստացվում է ոչ թե 18, այլ, եթե պրոֆ. Ղարիբջանի նման հնդեվրոպական հիմնալեզվի համար ընդունենք բոլոր հնարավոր տիպերի գոյությունը, 36. Երրորդ՝ հնդեվրոպաբաններին քաջ հայտնի է, որ հնդեվրոպական լեզուների միջև կան ձայնավորների համապատասխանությունների այնպիսի շարքեր, որոնք ենթադրել են տալիս նաև մեկ կամ երկու այլ ձայնավորների գոյությունը՝ Մեյլեի նշանակմամբ՝ *ə և *o. Ճիշտ է, սակայն, որ այսպես կոչված կոկորդալինների հիպոթեզի կողմնակիցները դրանցից ստաջինը փորձում են նույնացնել կոկորդալին բաղաձայնների հետ՝ տարբերելով նույնիսկ ə-ի (schwa indogermanicum) մի քանի տեսակ. չորրորդ՝ հնդեվրոպական հիմնալեզվում, բացի բուն ձայնավորներից, որպես ձայնավոր կարող էին հանդես գալ և ձայնորդները, այդ թվում նաև i-ն և u-ն, որոնք հետագայում դառնում են անկախ ձայնավորներ:

Հիշյալ նախադասությունից անմիջապես հետո պրոֆ. Ղարիբջանը գրում է. «Թվում է, թե այդ պետք է բացատրել երաժշտական շեշտով»¹: Մեզ հայտնի չէ բաղմախորհուրդ թալս-ի իսկական արժեքը, բայց բոլոր դեպքերում էլ պետք է հիասթափեցնենք պրոֆ. Ղարիբջանին. հնդեվրոպական երկար և կարճ ձայնավորների տարբերությունը հնչույթային արժեք ունեւ և կապված չէր շեշտի ոչ գիրքի, ոչ էլ բնույթի հետ. գեո ափելին, վաղուց հայտնի ճշմարտություն է, որ երաժշտական շեշտը ձայնավորների այնպիսի փոփոխություն չի առաջացնում, ինչպես ուժայինը. Մեյլեն նույնիսկ գրում է, որ «հնդեվրոպական տոնը հանգում էր լոկ ձայնի բարձրացմանը, առանց նկատելի ուժեղացման, և գլխավորը՝ ձայնավորի առանց որևէ երկարացման»²:

Վերևում ասածները հասկանալի են դարձնում, որ Արամոյի բարբառի՝ միայն շեշտի գիրքից կախված, երկար ձայնավորներն ու երկրաբառները ոչ մի կերպ չեն կարող կապվել հնդեվրոպական երկրաբառների ու երկար ձայնավորների հետ. նրանք արդյունք են պարզապես շեշտի ազդեցության: Պրոֆ. Ղարիբջանը, գրելով, թե «Արամոյի երկրաբառները մասամբ հիշեցնում են գրաբարին (?)», բայց մեր կարծիքով նրանք ավելի մոտ են հնդեվրոպական նախալեզվին, հնդեվրոպական նախալեզվի հետ նույնն են (?) Արամոյի բարբառի երկար ձայնավորները», նեղություն չի քաշում նույնիսկ ստուգելու, թե իրոք Արամոյի բարբառի երկրաբառներն ու երկար ձայնավորները համընկնում են հնդեվրոպականների հետ. պրոֆ. Ղարիբջանի՝ Արամոյի բարբառից նույն էջում բերած օրինակների՝ մեր կողմից կատարված առաջին իսկ համեմատությունները ցույց են տալիս այս պնդման ստույգ չլինելը. այսպես,

¹ Ար. Ս. Ղարիբջան, Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ, էջ 10:

² А. Мейе, *Уд. азбука*, էջ 163:

³ Ար. Ս. Ղարիբջան, Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ, էջ 10:

ամպ բառի դիմաց Արամոյի բարբառն ունի առավել ձևը, այնինչ այս բառը հնդեվրոպական ընդհանուր նախաձևն է համարվում *nbho- կամ *ṛbho- (*ṛ, *ṛ-ն հայերենում տալիս են ան, ամ), երես բառի դիմաց Արամոյի բարբառն ունի իրենյա ձևը, մինչդեռ հնդեվրոպական նախաձևն է *prepsa- ալյուր (գրաբար՝ ալիւր, ավելի հին ձևը՝ ալբար) բառի դիմաց Արամոյի բարբառն ունի իլայր ձևը, որ ակնհայտորեն խիստ հեռու է հունարենի πῶλον- ձևից, որի հետ համեմատում են ալբար (ընդ որում կա սեռ. ալբարոյ) ձև- վր։ Մենք կարող ենք այս շարքը անվերջ շարունակել հաջորդ էջերի տվյալ- ներով, բայց այսքանն էլ բավական է ցույց տալու պրոֆ. Ղարիբյանի հետա- ղոտական մեթոդի բնույթը։ Իմիջիպաց նշենք, որ այստեղ կա պրոֆ. Ղա- րիբյանի անփութ է իր բերած հնդեվրոպական նախաձևերի տառադարձու- թյան հարցում։ Հիշված գրքի 11-րդ էջում երկու անգամ կրկնվում է, որ հա- յերեն ծ-ն ծագում է *ḡ-ից, մինչդեռ *ḡ-ն, ինչպես հայտնի է, հայերենում տալիս է կ. խոսքը, անշուշտ, *ḡ-ի մասին է. էլ ինչու են գրվում ¹ և - նի- շերը, եթե կարելի է գրանք խառնել իրար հետ։

Իր „Новая группа диалектов армянского языка“ հոդվածում¹ պրոֆ. Ղարիբյանը գործիականի իմաստ արտահայտող ի+հայցական կառուցվածքը չգիտես ինչու գրաբարում համարում է «մնացուկային երևույթ» (перезиточ- ное явление) և Արամոյի բարբառում գործիականի միայն այդ ձևով արտա- հայտվելը դիտում է որպես խորը հնության ապացույց, այնինչ այստեղ առ- կա է հնդեվրոպականի բուն գործիականի ձևը նոր, նախորդվոր ձևով (համադ- րական ձևը վերլուծական ձևով) փոխարինելու տենդենցի հետագա ընդլայ- նումը։

Պրոֆ. Ղարիբյանը հաշվի չի առնում հայերենին ավելի կամ պակաս չափով մերձավոր ցեղակից լեզուները և հնդեվրոպական հիմնալեզվի տերիտորիալ տարբերակումները։ Նա ոչ միայն հենց սկզբից լիովին կտրում է հայերենի զարգացումը հնդեվրոպական մյուս լեզուների զարգացումից և հայ բարբառները դիտում որպես անկախ միավորներ, այլև լիովին խզում է հայոց լեզվի զարգացման տարբեր փուլերի կապը։ Հայտնի է օրինակ, որ հայերենը բավականաչափ մերձավոր ցեղակցական կապեր պետք է ունեցած լինի թրակա-փուլոգիական լեզուների հետ, որոնցից գոնե թրակերենի հա- մար ապացուցված է բաղաձայնների նույնպիսի տեղաշարժ, ինչ հին հայերե- նի համար։ Նշանակում է թրակա-փուլոգիական լեզուները և հայերենը եթե մի ընդհանուր հիմնալեզվից չեն ծագել, ապա գոնե ժամանակին մերձավոր լեզուներ են եղել, որոնց մեջ կատարվել է բաղաձայնների միևնույն տեղա- շարժը։ Պրոֆ. Ղարիբյանի մոտ հայերենը զարգարում է հայերեն լինելուց՝ իր հատուկ տեղաշարժով հանդերձ։ Այն, ըստ պրոֆ. Ղարիբյանի, իր տարբեր բարբառներով տարբեր շրջաններում տարբեր բաղաձայնական փոփոխու- թյուններ է կրել՝ նմանվելով մնացած բոլոր լեզուներին, բացի իրենից։ Հին հայերենի զրավոր վիճակը ներկայացնող գրաբարը պրոֆ. Ղարիբյանը դի- տում է որպես «տարբեր հայերեն լեզու»։ «Եթե ամբողջ գրաբարը չլիներ,— գրում է պրոֆ. Ղարիբյանը,— բայց մեզ հայտնի լիներ, որ անցյալում հոգ- նակին ք ածանցով (?) է կազմվել, մենք իրավունք կունենայինք պնդելու, որ մեր ժամանակակից գրական լեզվին նախորդել է մի տարբեր հայերեն լե-

¹ „Вопросы языкознания“, 1958, № 6, էջ 98։

գու, որն ունեցել է ք հոգնակիակերտ ածանց: Եվ մենք իրավացի կլինենք» (էջ 258). այո, իրավացի կլինենք այն չափով, որ չափով ոչ մի լեզվի գրավոր ավանդված հին վիճակը չի կարող տարբեր չլինել այդ նույն լեզվի նոր գրավոր վիճակից. բայց սխալ կլինենք, եթե կարծենք, թե գրանք ոչ թե միևնույն լեզվի տարբեր պատմական վիճակների գրավոր արտացոլումներն են, այլ տարբեր լեզուներ. այսինքն՝ կանգնենք Մառի ու Նրա հետևորդների այն տեսակետի վրա, թե գրաբարը և բարբառները միանգամայն տարբեր լեզուներ են և այն էլ տարբեր գաստկարգերի լեզուներ:

3

Բարբառների և ընդհանրապես հայերենի հնչույթային սխառմի և հնչյունական կառուցվածքի քննության մեջ պրոֆ. Ղարիբջանը հանդես է բերում մի շարք թերություններ: Ստույգ հնգեվրոպական հնչույթային սխառմի՝ հին հայերենում ու բարբառներում կրած փոփոխությունների մասին, նա 1) գրանք խստորեն չի կապում հնչույթների՝ բառային դիրքի հետ, մի բան, որ մեծ չափով պայմանավորում է փոփոխության բնույթը. 2) հաշվի չի առնում հնչույթային փոփոխությունների փոխկապակցվածության և շղթայաձևությունների սկզբունքները, որոնք ժամանակակից պատմական հնչույթաբանության հիմնական սկզբունքներն են և որոնք լիովին համապատասխանում են ամեն տեսակ մասնակի մեթոդների հիմքին՝ դիալեկտիկական մեթոդին. 3) հնչույթներն ու նրանց փոփոխությունները կարում է բառերից՝ այդ փոփոխությունների իրական կրողներից և քննում բառային մյուս փոփոխություններից լիովին անկախ. 4) հաշվի չի առնում բարբառների ձայնավորների կրած փոփոխությունները, որոնք բարբառները շատ ավելի են անհասկանալի դարձնում, քան բաղաձայնների փոփոխությունները. 5) ինչպես կտեսնենք, կարում է բարբառների հնչյունական կառուցվածքն ու հնչույթների սխառմը բարբառների ողջ սխառմից. 6) բարբառները սովորաբար դիտում է իբրև միատարր ամբողջություններ՝ առանց բավարար չափով հաշվի առնելու նրանց ներսում եղած խտվածքային և այլ կարգի տարբերությունները. 7) շեշտը դնում է բարբառների՝ իրարից և հին հայերենից ունեցած տարբերությունների վրա՝ առանց խոսելու ընդհանրությունների մասին, այն գծերի մասին, որոնք հայերենի բարբառները դարձնում են հենց հայերենի բարբառներ, որոնք հայերենին հաղորդում են իր բնույթը, որոնք ընդհանուր հայկական են. այլապես այդպիսի կտրված քննության գեպքում հայերենի որոշ բարբառներ (նույնիսկ խոսվածքներ), առնվելով միայն բաղաձայնների շարքերի բնույթով, ավելի մոտ են դառնում մի գեպքում սանսկրիտին, մի այլ գեպքում իրանական լեզուներին, մի երրորդ գեպքում՝ կելտական լեզուներին, մի չորրորդ գեպքում՝ գերմանական լեզուներին և այլն, բայց չեն առնվում որպես հայերենի բարբառներ. ըստ Ղարիբջանի՝ դուրս է գալիս, որ հայերենի բարբառները կարելի է մոտ համարել բոլոր հնգեվրոպական լեզուներին, բացի հին հայերենից, որի հետ մոտ համարելուց չգիտես ինչու նա այդքան խուսափում է:

Ինչպես հայտնի է, հնգեվրոպական հնչույթների՝ հայերենում կրած փոփոխությունները խստորեն կապված են բառի մեջ գրաված դիրքի հետ: Այդպիսի պայմանավորվածություն ունեն նաև բարբառների հնչույթների փոփոխությունները: Այլ կերպ էլ լինել չի կարող, որովհետև հնչույթների փոփո-

խուլթյունները կատարվում են ոչ թե անկախ ձևով, այլ բառերի հետ կապված: Լեզուն առաջին հերթին հաղորդակցման միջոց է, և այդ հաղորդակցման հիմնական միավորները բառերն են. մեր լեզուն բառերի լեզու է. հընչուլթյունները լեզվի մեջ կարևոր են հենց այն չափով, որ չափով ծառայում են լեզվի ֆունկցիայի իրականացմանը: Սակայն պրոֆ. Ղարիբյանը մոռանում է հնչուլթյունների փոփոխությունների գիրքային պայմանավորվածության մասին:

Հայտնի է, որ հնգևորոպական պալթականների 4 շարքերը (շնչեղ-ձայնեղներ, ձայնեղներ, խուլեր և խուլ-շնչեղներ) հնչուլթային արժեք ունենին. 1) դրանցից յուրաքանչյուրը կարող էր մյուսին հակադրվել միևնույն գիրքում և տարբերակել իմաստները. 2) դրանցից յուրաքանչյուրը կարող էր հանդիպել ոչ միայն բառակերպում, այլև մի այլ գիրքում. այլ կերպ ասած՝ հնգևորոպական բաղաձայնների այս չորս շարքերի տարբերությունը կախված չէր նրանց բառի մեջ գրված գիրքից և մերձակա հնչյունների ազդեցությունից, այլ իմաստատարներից արժեք ունեն: Այդ վերաբերում էր նաև շնչեղ-ձայնեղների և ձայնեղների տարբերությանը. այսպես, *bel- հնգևորոպական արմատը (սնսիր. balam «ուժ», հուն. βέλτιον «ավելի լավ», լատ. debilis «թուլ», ռուս. больше «ավելի շատ») տարբերվում է *bhel- արմատից (հուն. βύλλον «տերև», լատ. folium «տերև», գերմ. blatt «տերև», հայ. բող-բոջ, բող-իլ, բող-լ) միայն ձայնեղի և շնչեղ-ձայնեղի հակադրությամբ. միաժամանակ նշելի է, որ շնչեղ-ձայնեղները կարող են հանդիպել ոչ միայն բառակերպում, այլև բառամիջում. հմմտ. *wegh- (սնսիր. vāhati «կրում է», ասում է», հուն. ἄγω «սալլ», լատ. vehō «կրել, տանել»), *steigh- (սնսիր. stighnōti, հուն. στεῖχω «դնալ, ոտ դնել», լատ. ve-stigium «հետք, արահետ, ներքան») և այլն. այսպես է վիճակը նաև հնդկական լեզուներում, որոնց հիման վրա էլ հենց խոսվում է հնգևորոպական շնչեղ-ձայնեղների բնույթի մասին:

Այժմ տեսնենք, թե ինչպես է վիճակը հայերենի բարբառներում: Ինչպես հայտնի է, հայերենի բարբառներից միայն մի քանիսն են, որ ունեն արտաքինապես հնգևորոպականի 4 շարքերը հիշեցնող բաղաձայնական շարքեր. դրանք Կարնո, Մշո ու Ողմիի և Արարատյան ու Նոր-Ջուղայի բարբառներն են: Մնացած բարբառները ունեն հնգևորոպականի միայն 3 կամ 2 շարքերը հիշեցնող բաղաձայնական շարքեր և (եթե դանց առնենք քմայնացած և տնալեզվայինների շարքը, որ պրոֆ. Ղարիբյանը իր հնչյունական դասակարգման մեջ նույնպես սովորաբար դանց է առնում) բաղաձայնական հարստությամբ չեն գերադանցում դրաբարը և արևելյան գրական աշխարհաբարը: Այն էլ ասենք, որ այդ 4 շարքերը ներկայացված են հիշյալ բարբառների ոչ բոլոր խոսվածքներում. եթե պրոֆ. Ղարիբյանը հետևողական լիներ բարբառների ծագման իր տեսությունից, ապա, գիցուք, Արարատյան բարբառի տարբեր խոսվածքները պետք է իրարից կարեր և դասավորեր բարբառների ծագման իր հնարած ժամանակագրական սարքեր փուլերի մեջ. չէ՞ որ ինքը պրոֆ. Ղարիբյանը նշում է, որ «Արարատյան բարբառի դանդաղ հատվածներում այժմ նկատվում են հնչյունական տարբեր օրինաչափություններ: Այսպես՝ Բանաքեռի խոսվածքում բառակերպի բաղաձայնական համակարգը երկաստիճան խլաղուրկ է, Էջմիածնի խոսվածքում համարյա նուստիճան է, իսկ Աշտարակը, Փարպին՝ Լոռին հավատարիմ են բարբառի հիմնական հատկանիշներին» (էջ 246): Սակայն 4 շարքի բաղաձայններ ունեցող բարբառների այդ շարքերը հնչուլթային միատեսակ

արժեք չունեն. եթե դանց առնենք ուշ շրջանի որոշ փոխառությունները, որոնց մեջ բառասկզբում հանդես են գալիս պարզ ձայնեղներ, ապա կարելի է ասել, որ շնչեղ-ձայնեղների և ձայնեղների տարբերությունը այդ բարբառներում հնչույթային արժեք չի ունեցել (Կարնո բարբառում, ըստ Հ. Միրա-չյանի, այժմ էլ չունի). շնչեղ-ձայնեղները և ձայնեղները երբեք միևնույն դիրքում չեն հանդիպել և հետևաբար իմաստատարներից արժեք չեն ունեցել. այդ առավել ևս ճիշտ է հնդեվրոպական ծագում ունեցող բառերի համար, որոնք կազմում են հայերենի բոլոր բարբառների հնագույն շերտը. այսպիսի բառերում, ինչպես և վաղ կատարված բոլոր փոխառություններում շնչեղ-ձայնեղները հանդիպում են միայն բառասկզբում (բացառությամբ որոշ խոսվածքների), պարզ ձայնեղները՝ միայն ոչ-բառասկզբում. այս դեպքում՝ 1) հնդեվրոպական ոչ-բառասկզբային շնչեղ-ձայնեղներին տվյալ բարբառներում (բացառությամբ հիշված խոսվածքների) երբեք չեն համապատասխանում շնչեղ-ձայնեղներ և 2) հնդեվրոպական ձայնեղները երբեք նույնությամբ չեն հանդիպում բառասկզբում. այսպիսով, նախ՝ հայերենի հիշյալ բարբառները հնդեվրոպական շնչեղ-ձայնեղների և ձայնեղների հնչույթային հակադրությունը չեն պահպանել և երկրորդ՝ հակառակ պրոֆ. Ղարիբջանի «տեսություն»՝ այստեղ բարբառային շնչեղ-ձայնեղների ու ձայնեղների և հնդեվրոպական շնչեղ-ձայնեղների ու ձայնեղների միջև ուղղագիծ համապատասխանություն չկա: Որ շնչեղ-ձայնեղների և ձայնեղների տարբերությունը այսպես կոչված քառաստիճան բաղաձայնական սխտեմ ունեցող բարբառներում իրոք հնչույթային արժեք չունի, երևում է այդ բարբառների հետադոտողներից մեկի, օրինակ, հետևյալ դիտողությունից. «Հայտնի է, որ Կարնո բարբառը Երևանի, Մշո, Ջուղայի բարբառների նման ունեցել է բաղաձայնների քառաստիճան սխտեմ, մինչդեռ այժմ արդի հայերենի ազդեցությամբ ձայնեղ-շնչեղները զգալապես թուլացել են, և բարբառիս բաղաձայնական սխտեմը աստիճանաբար սկսում է դառնալ եռաստիճան»¹: Շնչեղ-ձայնեղների և ձայնեղների տարբերության՝ հնչույթային և ոչ-դիրքային արժեք ունենալու դեպքում այդպիսի փոփոխությունը, կարելի է ասել, անհնար կլիներ:

Իմիջիպեսը նշենք, որ շնչեղ-ձայնեղների առկայության փաստը Արարատյան բարբառի Աշտարակի խոսվածքում առաջին անգամ նկատել է հայտնի հնչյունագետ Ջիվերսը՝ 1899 թ. Աճառյանը հրապարակում է այդ հարցի ուսումնասիրության իր արդյունքները՝ հայերենի բաղաձայնների փոքրածական քննության և Սուչավալի բարբառի նկարագրության կապակցությամբ: Սակայն ոչ Ջիվերսը և ոչ էլ Աճառյանը այստեղից անմիջապես այն եզրակացությունը չարեցին, թե հայերենի բարբառային շնչեղ-ձայնեղները ուղղակիորեն կապվում են հնդեվրոպական հիմնալեզվի շնչեղ-ձայնեղների հետ:

Պրոֆ. Ղարիբջանը այս կամ այն բարբառի բաղաձայնների մերձավորությունը հնդեվրոպական բաղաձայններին որոշում է հնչման մերձավորությամբ միայն. եթե Համշենի, Սյուրիայի, Ակնա, Արարատյան, Մշո, Կարնո և այլ բարբառներում կան շնչեղ-ձայնեղներ, ապա պրոֆ. Ղարիբջանը, գրանք կտրելով հնչյունական և լեզվական ողջ սխտեմից, իսկույն անմիջական կապի մեջ է դնում հնդեվրոպականի հետ. եթե որևէ բարբառի բառեր գրաբարի խուլերի դիմաց ունեն ձայնեղներ և դրանով իսկ մասամբ հիշեցնում են հնդ-


¹ Հ. Միրաչյան, Կարնո բարբառը, Երևան, 1952, էջ 102:

և վրոպական նախադասությունները, ապա նա չի կասկածում, որ դրանք գալիս են հնդեվրոպական նախադասություններից, ընդ որում դարձյալ ալլո համապատասխանություններն առնվում են մյուս կարգի փոփոխություններից լիովին կարված: Եթե պրոֆ. Ղարիբջանը ակնհայտ հակակրանք չունենար դրաբարի և մեր նոր գրական լեզվի բաղաձայնական սիստեմների հանդեպ, Հաշխատեր բարբառներն ամեն կերպ ավելի հին դուրս բերել գրաբարից, ապա ամենայն հավանականությամբ չէր հաշտվի: Վրաբարի՝ տեղաշարժի ենթարկված լինելու գաղափարի հետ և կաշխատեր գրաբարի և հնդեվրոպական բաղաձայնական սիստեմների միջև նույնպես ուղղակի համապատասխանություններ որոնել՝ ձայնեղների դիմաց՝ ձայնեղների, խուլերի դիմաց՝ խուլեր: Ի՞նչ պատկեր է ստացվում, երբ մենք համեմատում ենք հնդեվրոպական հնչույթների սիստեմը մի կողմից՝ գրաբարի (հին հայերենի), մյուս կողմից՝ բարբառների հնչույթների սիստեմների հետ՝ նկատի առնելով լոկ բառասկզբային դիրքը, որ և հիմք է ընդունում պրոֆ. Ղարիբջանը (թեև, ինչպես տեսանք, առանց հետևողականության): Վրաբարի հետ համեմատելու դեպքում մենք նկատում ենք, որ, բացառությամբ շնչեղ-խուլերի, մնացած բոլոր շարքերը կանոնավոր տեղափոխություն են կատարել դեպի աջ՝ շնչեղ-ձայնեղները դարձել են ձայնեղներ, ձայնեղները՝ խուլեր, խուլերը՝ շնչեղ-խուլեր. սրանով իսկ հնդեվրոպական հնչույթային սիստեմի հարաբերակցությունը գրեթե անփոփոխ է մնացել: Իսկ ինչ վիճակ կներկայացնեն բարբառների հնչույթային սիստեմները, եթե դրանք համեմատենք ոչ թե գրաբարի, այլ, մի րոպե ճիշտ համարելով պրոֆ. Ղարիբջանին, հնդեվրոպական վիճակի հետ. այս դեպքում հնդեվրոպական հնչույթային սիստեմի հարաբերակցությունը լիովին խախտված դուրս կգա: Պրոֆ. Ղարիբջանի կողմից հնդեվրոպական վիճակին ամենից ավելի մոտ համարված բարբառներում (Պարբերդ—Երզնկայի, Սևրաստիայի, Համշենի, Ծապին-Գարահիսարի, Սաչավայի, Ակնա, Արաբկիրի, Պոտրջուրի) խուլերը տեղափոխվել են դեպի աջ, այսինքն՝ դարձել են շնչեղ-խուլեր, մինչդեռ շնչեղ-ձայնեղներն ու ձայնեղները իբր պահպանվել են անփոփոխ. հնդեվրոպական հարաբերակցությունը լիովին խախտված է, և խուլերի շարքը ամբողջովին բացակայում է. կունենանք հետևյալ պատկերը (ակնառություն համար դանց ենք առնում հնդեվրոպական շնչեղ-խուլերը, որոնք հնդեվրոպականում առանձին կարևոր դեր չէին խաղում և որոնց հարցը ավելի դեպքում կարևոր չէ):





Հնդեվրոպական հիմնալեզու	*bh	*b	*p
Վրաբար (հին հայերեն)	— b	p	ph
Հնդեվրոպական հիմնալեզու	*bh	*b	*p
Լ խմբի բարբառներ	bh	b	— ph

¹ Պրոֆ. Ղարիբջանի բերած աղյուսակներն ընդունելի չեն նախ՝ որովհետև դրանց մեջ հնդեվրոպական բաղաձայնների շարժման հնարավոր ուղղությունը չի երևում, և երկրորդ՝ որովհետև Մշո, Արարատյան և այլ բարբառների բաղաձայնների շարժման վերաբերյալ սխալ պատկերացում է տրվում. այդ բարբառներում բառասկզբում հնդեվրոպական ձայնեղները չեն հանգիստում, այլ վերածված են խուլերի:

Բարբառների երկրորդ խմբում (Մշո, Կարնո, Արարատյան և այլն), որտեղ ինչպես տեսանք, հնդեվրոպական ձայնեղները բառասկզբում չեն հանդիպում, կունենանք հետևյալ պատկերը.



Եթե այս նույն ձևով շարունակենք մեր քննությունը, զանց առնելով միայն բարբառների III խումբը, որի տեղաշարժը նման է գրաբարի տեղաշարժին, ապա կստանանք հնդեվրոպական բաղաձայնների փոփոխությունների հետևյալ ուղղությունները.



Միաբանների ուղղությունը ցույց է տալիս, թե գրաբարի համեմատությամբ ինչպիսի՞ խախտարդեալ պատկեր է ներկայացնում բարբառների փոփոխությունը. սա լավագույն ապացույցն է այն դրույթի, որ բարբառների բաղաձայնները նույնությամբ հնդեվրոպական հիմնալեզվից չէին կարող գալ:

Ինչպես նշեցինք, պրոֆ. Ղարիբյանը բաղաձայնների կրած փոփոխությունները կտրում է բառերի ընդհանուր փոփոխություններից: Մինչդեռ գրաբարյան և բարբառային բառերի կրած փոփոխությունների ամենամակերեսային քննությունն իսկ ցույց է տալիս, որ գրաբարյան բառերը հնչյունապես ընդհանուր առմամբ ավելի լավ են պահպանել հնդեվրոպական տիպը, ավելի մոտ են հնդեվրոպական նախատիպերին, քան բարբառայինները (բացառություն են կազմում միայն այն կարճ բառերը, որոնք այլ կարգի հնչյունական փոփոխության չեն ենթարկվել և որոնց մերձավորության աստիճանը արտաքինապես կարող է խաբուսիկ լինել): Այսպես է վիճակը նաև հնագույն փոխառությունների գեպքում: Վերցնենք մի շարք օրինակներ այն բարբառներից, որոնք շնչեղ-ձայնեղներ ունեն և որոնց բաղաձայնական սխառնությունները պրոֆ.

Ղարիբյանի կարծիքով պետք է ավելի վաղ կազմավորված լինեն, քան դրաբարինը (հին հայերենին)։ Առնենք մենագրական ուսումնասիրության ենթարկված Մշո, Կարնո, Համշենի, այլև մեղ շատ լավ հայտնի Արարատյան (Երևանի) բարբառը։

Ահավասիկ մի քանի օրինակ Համշենի բարբառից, որ ուսումնասիրել է Հ. Աճառյանը¹։ Նախ՝ նշենք, որ հին հայերենի (գրաբարի) ձայնեղներին շնչեղ-ձայնեղներ ևն համապատասխանում Համշենի բարբառի միայն Մալալի խոսվածքում (ըստ Աճառյանի՝ «Ճշուղում»)։ Ճանկի խոսվածքում դրանց համապատասխանում են պարզ խուլները, իսկ Տրապիզոնի մոտակա գյուղերի խոսվածքում դրանք անփոփոխ ևն մնում։ այսպիսով, եթե հավատանք պրոֆ. Ղարիբյանին, միևնույն բարբառի «Ճշուղները» (խոսվածքները) հանդիսացող և բազմաթիվ ընդհանուր գծեր ունեցող (հատկապես ձայնավորներով ու քերականական կառուցվածքով) այս միավորները կազմավորվել են իրարից բոլորովին անկախ և իրարից մեծ չափով հեռու ընկած ժամանակներում (ըստ պրոֆ. Ղարիբյանի ժամանակագրական սխեմայի)։ Վերցնենք Մալալի հյուղը, որտեղ ըստ պրոֆ. Ղարիբյանի շնչեղ-ձայնեղները պետք է ժառանգված լինեն անմիջապես հնդեվրոպական շրջանից։ Գրաբարյան աղբիւր (հին աղբիւր) ձևի փոխարեն այդ խոսվածքն ունի ախր՝ ուր ձևը, որ ակնհայտորեն ավելի հեռու է հնդեվրոպական *bhrevr նախածից (հմտ. հուն. φρεαρ), քան գրաբարյան ձևը. գրաբարի դ-ի գիմաց բարբառն ունի խ, որ ոչ մի կերպ անմիջականորեն չի կարող կապվել *բ-ի հետ, եթե ոչ հին հայերենի *բ>դ փոխանցմամբ (գիսիմիլյացիոն փոփոխություն՝ հաջորդ բ-ի ազդեցությամբ)։ -իւր և հին -եւր կապակցությունների փոխարեն բարբառն ունի ուր ձևը, որ կրկին կարող է հասկացվել միայն հիշյալ ձևերի միջնորդությամբ՝ -եւր>-իւր>-ուր։ Գրաբարյան դուք-ի գիմաց խոսվածքն ունի դ՝ ունք ձևը. այստեղ՝ նախ՝ շնչեղ-ձայնեղը հնդեվրոպականի հետ չի կարելի կապել. հնդեվրոպականի համար վերականգնվում է *vus ձևը, որ հայերենում պետք է տար *ջուք, բայց տվել է դուք՝ դու-ի ազդեցությամբ, ընդ որում վերջինս էլ ծագում է *tū-ից, որի հետ այլ կերպ չի կարող կապվել Մալալի խոսվածքի շնչեղ-ձայնեղավոր ձևը, քան ենթադրելով հին հայերենի՝ գրաբար տեքստերում արտացոլված դ-ի միջնորդությամբ՝ *l>դ>դ՝. երկրորդ՝ ն-ի առկայությունը բարբառում ակնհայտորեն ուշ հավելում է (հավանաբար մենք-ի ազդեցությամբ, որ նույնպես նոր ձև է)։ Գրաբարյան ձևը այս առումով, ինչպես կարելի է տեսնել վերևից, ն-ն չունի և ավելի մոտ է հնդեվրոպական ձևին (մենք<*mes)։ Նույն այդ խոսվածքը գրաբարյան մարդ (սեռ. մարդոյ) բառի գիմաց ունի մաշք ձևը², որ ոչ մի կերպ չի կարող անմիջապես բացատրվել հնդեվրոպական *mrto- ձևով, եթե չընդունենք հին հայերենի մարդ, սեռ. մարդոյ ձևի միջնորդությունը՝ ո>շ հնչյունափոխությամբ (հնդեվրոպական *բ-ն նախ տվել է ար, ապա աշ՝ այդ բարբառին հատուկ հնչյունափոխությամբ)։

Այժմ մի քանի օրինակ Մշո բարբառից³։ Հին հայերենի (գրաբարի) բարձր ձևի գիմաց այն ունի բանցր ձևը, որի ն-ն և ց-ն հնդեվրոպականով

¹ Հ. Աճառյան, Քննություն Համշենի բարբառի, Երևան, 1947։

² Նույն տեղում, էջ 42։

³ Նույն տեղում, էջ 44։

⁴ Հմտ. Ս. Ա. Բաղդասարյան - Թափալցյան, Մշո բարբառը, Երևան, 1958։

բացատրվել չեն կարող. հմմտ. *bhr̥gʰh- (սնսկր. bṛ̥h-ant, գերմ. Berg), որը չէր կարող տալ բացի քան Բերգ (հուն. բարձունք) ձևի միջնորդությունը. ընդհանրապես նշելի է, որ բարբառս (Արարատյան բարբառի նման) ր-ից հետո սպասելիք չնչեղ-ձալնեղների դիմաց ունի չնչեղ խուլեր. հմմտ. արբեմ (<հնդ. *sr̥bh-)—Մշո բրբռ. հարսիկ, դարբին (<հնդ. *dhabhro-)—Մշո բրբռ. դ'արսիկն և ալլն. ալսպես և սպասելիք չնչեղ-ձալնեղների դիմաց դ-ից (բրբռ. իս-ից) հետո անկա է պ' աղբիւր (<հնդ. *bh-revr) — Մշո բրբռ. ախպուր, եղբար (<հնդ. *bhrater) — Մշո բրբռ. ախպեր և ալլն. շատ հատկանշական է վերջին բառը. որի ոչ լս-ն, ոչ պ-ն և ոչ էլ և-ն չեն կարող բացատրվել, եթե չընդունենք եղբայր և թերևս սրա կողքին գոյություն ունեցած *աղբայր գոգածի միջնորդությունը (անկախ ալք ձևերի՝ V դարից որքան առաջ ձևավորվելու մասնակից): Հնդեվրոպական *dhr̥- (սնսկր. dhārayati, սաքս. darian), նախածեր հայերենում ավել է դար, դադար ձևերը, առանց որոնց չի կարելի հասկանալ Մշո բարբառի դաքար ձևը (ծագում է դար արմատի կրկնավոր դադար ձևից, որտեղ դ-ն Մշո բարբառի սովորական օրենքներով երկու ձալնավորի մեջ փոխված է ր-ի):

Մի քանի օրինակ էլ կարնո բարբառից¹: Եթե մեզ ծանոթ չլինեին հին հայերենի բոկ (<հնդ. *bhoso-, հմմտ. ոռւս. босой) արմատից ստացված բոկիկ ձևը, ապա շատ դժվար կլիներ բացատրել կարնո բարբառի բ'որիկ ձևը: Այս բարբառում ևս աղբիւր, եղբայր ձևերի դիմաց ունենք ախպուր, ախպեր ձևերը, որոնք ոչ մի կերպ անմիջականորեն չեն կապվում հնդեվրոպական նախածերի հետ:

Էլ ավելի ուսանելի են հայերենի հին փոխառությունների կրած փոփոխությունները գրաբարում և բարբառներում: Այն դեպքում, երբ գրաբարում ալք բառերը ներկայացված են փոխատու աղբյուրին շատ մոտ կամ նույնիսկ նույնական ձևերով, բարբառներում դրանք նշանակալից փոփոխություններ են կրել: Պահպանված 328 > դրաբ. ազգ ձևի դիմաց Մշո բարբառում տեղա է ապր ձևը². ալսպես էլ հին հայերենի արժեյ (պահեյ, arzitan) ձևի դիմաց՝ բժեյ, կաթողիկոս-ի (հուն. καθελίκος) դիմաց՝ կաթողիկոս, սպիտակ-ի (պհ. spetak) դիմաց՝ սիվղազ և ալլն: Ալսպես է վիճակը նաև մյուս բարբառներում:

Այս բոլորը վկայում են, որ՝ 1) գրաբարյան ձևերը ընդհանուր առմամբ հնդեվրոպական նախածերին ավելի մոտ են, քան բարբառային ձևերը, 2) գրաբարյան ձևերը փոխատու լեզվի ձևերին ավելի մոտ են, քան բարբառային ձևերը, 3) բարբառային ձևերը կարելի է հնդեվրոպական և հին փոխատու աղբյուրի ձևերի հետ կապել հին հայերենի ձևերի միջնորդությամբ միայն (բացառությամբ բարբառների պահպանած սովորաբանի ալ ձևերի), իսկ հին հայերենի մասին մենք դադարաբար ունենք միայն գրաբար տեքստերից:

Այս բոլորին միանում են, ինչպես ասել ենք, բարբառների ձալնավորների ալնալիս ուժեղ փոփոխությունները, որոնք մեծ չափով հեռացնում են բառերը հին նախատիպերից և շատ չեպքերում անհասկանալի ու դժվար հասկանալի դարձնում բառերը: Իբրև կանոն կարելի է ասել, որ գրաբարյան (հին հայերենի) բառերի ձալնավորները (և երկբարբառները) ավելի մոտ են

¹ Հմմտ. Ն. Մկրտչյան, *Կարնո բարբառը*, Երևան, 1952.

² Մ. Ա. Բաղդասարյան - Թափալցյան, *Մշո բարբառը*, էջ 47:

հնդեվրոպական և հին փոխառու լեզուների վիճակներին, քան բարբառային ձևերը: Այսպես, այ երկբարբառի դիմաց բարբառները սովորաբար ունեն ե, ա (Ագուլիսի բարբառի հնության վերաբերյալ Վանցյանի հայտնած կարծիքին ավելորդ ենք համարում անդրադառնալ, որովհետև այն հիմնավորապես հերքված է Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» II մասում). այս առումով հատկանշական է հետևյալը. ալնպիսի բառերի մեջ, ինչպիսիք են հայր, մայր, եղբայր բառերը, այլը գալիս է *-ater, -π ater ձևերից՝ *ē-ի թուլացմամբ ու անկմամբ, և *t>յ փոխանցմամբ. բարբառային հեք, խեք, մեք, ախպեք, հար, մար, ախպար ձևերը այս առումով ակնհայտորեն կապվում են հնդեվրոպական ձևերի հետ հին հայերենի ձևերի միջնորդությամբ. առանց այս բանն ընդունելու չի կարելի կիրառել պատմա-համեմատական մեթոդը, չի կարելի լեզուն քննել իսկական պատմականությամբ, չի կարելի տուրք չտալ մասական ձևանածություններին: Որ հայր, մայր, եղբայր (*աղ-րայր) ձևերը նախորդել են բարբառային հիշված հեք, մեք, ախպեք և այլն ձևերին, կասկած հարուցել չի կարող. վեճերի տեղիք կարող է տալ միայն այն հարցը, թե երբվանից են գոյություն ունեցել հայր, մայր, եղբայր ձևվերը և երբ են դրանք փոխանցվել հեք, մեք, ախպեք ձևերի:

Պրոֆ. Ղարիբջանի «տեսություն» արատավորությունը ցույց տալու համար բավական է դիմել Համշենի բարբառին, որն ըստ նրա պետք է ամենից ավելի վաղ կազմավորված բարբառներից մեկը լինի. վերջնենք միայն ա-ի փոփոխությունները¹. այստեղ բաղմավանկ բառերի մեջ բառամիջի ա-ն սղվում է կամ փոխվում ր-ի՝ արաասուք (<հնդ. *drak'ru) -- այգքսունք, քառասուն (հմմտ. սնսկր. catvarincāt, հուն. τεσσαράκοντα, լատ. quadraginta) -- քառսուն և այլն. ոնգայիններից առաջ ա-ն փոխվում է օ-ի՝ խիստ կերպով հեռացնելով ալնպիսի բառերը նախաձևերից և փոխառու աղբյուրի ձևերից՝ ամբար (պհլ. hambar, պրսկ. ambar) -- օմբառ, ականջ--օնգօն, անոյշ (պհլ. anos) -- օնուշ, դարման (պհլ.-պրսկ. darman) -- դեքմօն, հանապարհ--ջօմփա, սատանայ (<ասոր. satāna<հս. satan) -- սադօն և այլն և այլն. ա-ն կրել է և ալ փոփոխություններ՝ վերածվելով ե-ի (հմմտ. յաղթել--եխտուշ), ե-ի կամ օ-ի (ուրազ--ուրեք, իւրօք), ը-ի (մատաղ--մաղաղ կամ մըղաղ) և այլն: Այս օրինակները բավական են ցույց տալու, թե որքան հեռու է Համշենի բարբառը հնդեվրոպականին ամենից ավելի մոտ և զրաբարից էլ հին բարբառ լինելուց:

Վերջացնելով այս հատվածը՝ մենք ուզում ենք մի քանի խոսք ասել նաև այն մասին, թե ինչպես է պրոֆ. Ղարիբջանը շեշտը դնում բարբառների և զրաբարի տարբերությունների վրա՝ դրանք ուղեցնելով մինչև զրաբարն ու բարբառները իրարից լիովին կտրելու աստիճան, և մոռանում ընդհանուր գծերի մասին: Պրոֆ. Ղարիբջանը «մոռանում է», որ բարբառները բաղմավորվելով ալ փոփոխություններ պետք է կրեին, մինչև որ հնարավոր դառնային նրանց հատուկ փոփոխությունները. եթե ընդհանուր հայերենը հնդեվրոպական *r, *l, *m, *n ձայնավոր ձայնորդները նախապես փոխած չլինեք ար, աղ, ամ, ան-ի, ապա Համշենի բարբառը չէր կարող միանգամից *r-ն ատամնայիններից առաջ փոխել աշ-ի. պարզ է, որ նախ r-ն տվել է ար, ինչպես այդ պահպանված է զրաբարում, ապա r-ն ատամնայիններից առաջ փոխվել:

¹ Հ. Աճառյան, Քննություն Համշենի բարբառի, Երևան, 1947, էջ 25—26:

է շ-ի (հմմտ. մարդ > մաշաւ, երբալ > էշաուշ, երդումն > էշքվունք, բերքել > քեշաուլ, վարդապետ > վաշաարեդ և այլն)¹։ Եթե հայերենի բոլոր բարբառները հնդեվրոպական *t-ն. *tū և *tō. *tā -դերանունների մեջ չժառանգելն ձայնեղացած ձևով՝ դու, դա, ինչպես պահպանել է գրարարը, ապա անհասկանալի կլինէր շնչեղ-ձայնեղներ ունեցող բարբառներում այդ բառում դ՝ շնչեղ-ձայնեղի առկայութիւնը². Նշանակում է՝ նախահինհայերենյան (նախագրարարյան) շրջանում *t-ն փոխվել էր դ-ի, որ և հետագա որոշ բարբառներում կամ մնում է դ, կամ փոխվում դ՝-ի և տ-ի. նշենք. որ վերջին դեպքում էլ տ-ն անմիջապէս հնդեվրոպական տ-ից չի գալիս, այլ արդյունք է տվյալ բարբառներում կատարված ընդհանուր տեղաշարժի։ Հայտնի է, որ հին հայերենի ջ-ն, որ շնչեղ-ձայնեղ ունեցող բարբառներում բառասկզբում փոխվել է ջ՝-ի, ծագում է ոչ միայն *g-ից (առաջին շարքի ձայնավորներից առաջ գտնված դիրքում), այլև *y-ից. հմմտ. *yowo- > ջրով, *yuro- > ջուր, yə- > ջա-ն-ք. հասկանալի է, որ մեր բարբառները ժառանգել են հնդեվրոպական բառակզրի *y-ն արդեն ջ-ի փոխված ձևով, ապա միայն այն փոխել շնչեղ-ձայնեղ ջ-ի, որոշ դեպքերում էլ ն-ի։ Այսպէս է վիճակը նաև *v-ից ծագած գ ունեցող բառերում, որոնք բարբառները տարրեր փոփոխութեան են ենթարկել ըստ իրենց տեղաշարժերի՝ գիշեր > գիշեր և քըշիւ. հնարավոր է, որ հնդեվրոպական *v-ն թերևս նախ փոխված լինի *g^w-ի, ապա գ-ի, բայց որտեղից է պրոֆ. Արիւրյանը գտել, որ *v-ն պետք է փոխված լինի *g^wh-ի, մեզ անհայտ է։ Հայտնի է, որ հնդեվրոպական ծագում ունեցող բառերում բաղաձայն + ր կապակցութիւնները ենթարկվել են դրափոխութեան, ընդ որում ր-ն բառասկզբում գտնված դիրքում իրենից առաջ ստացել է ն, երբեմն էլ ա նախահայկերէնում. այս երևույթը ընդհանուր հայկական է. ոչ մի բարբառ չկա, որ, ասենք, հնդեվրոպական *bhrater ձևը պահպանած լինի առանց այդ դրափոխութեան և *r > ր (> ր) դիսիմիլյատիվ փոփոխութեան. խիստ հատկանշական է, որ դ-ն բոլոր բարբառներում փոխված է լւ-ի, որ միանգամից չէր կարող ր-ից ծագել, եթե այն հաջորդ ր-ի տարնամանողական ազդեցութեամբ նախ դ-ի փոխված չլինէր. այսպիսով, գրարարյան ձևը հնարավորութեւն է տալիս բարբառային ձևերը բացատրել, թեև բարբառների բառասկզբային ա-ով ձևերը կարող են գրարարին զուգահեռ որեւէ հին բարբառային *աղբայր տիպի ձևից ծագած լինել (եթե այդ ա-ն հաջորդ ա-ի ասիմիլյատիվ ազդեցութեան արդյունք չէ)։ Հնդեվրոպական *d^w կապակցութեւնը հայերենում արտացոլված է որպէս երկ (dwa- > երկ-ար, երկ-այն, *dwi- > երկ-իւղ, երկ-նշել, *d^wō > երկու). ոչ մի բարբառում, ներառյալ և այն բարբառները, որոնք դ-ն պրոֆ. Արիւրյանը բխցնում է հնդեվրոպական *d-ից. հնդեվրոպական *d^w կապակցութեան *d-ն չի ներկայացված նույնութեամբ. այդ կապակցութեւնը փոխված է երկ-ի և կրել է տվյալ բարբառներին հատուկ հնչյունափոխութեւնը՝ *d^wo > երկու > երգու, երկու և այլն։ Հնդեվրոպական *g²ebhura-ն հայերենում տվել է կամուրջ, որ բարբառներում պահպանվել է տարրեր ձևափոխութեւններով. ր՝ շնչեղ-ձայնեղ ունեցող բարբառները նա *b^ho-ն նույնութեամբ չեն պահպանել. այլ մ-ի փոխված ձևով.

¹ Հ. Աճառյան, Քննութիւն Համշենի բարբառի, էջ 65։

² Հմմտ. Է. Աղայան, Նոր հայերեն բարբառների առաջացման հարցի մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 2, էջ 218։

նշանակում է բոլոր բարբառների ձևերը կարելի է հնդեվրոպականի հետ կապել միայն գրաբարում պահպանված ձևերի միջնորդությամբ: Այս օրինակների թիվը կարելի է անվերջ բազմացնել, բայց կարծում ենք, որ այսքանն էլ բավական է ցույց տալու բարբառների հնչյունական երևույթների գերակշռող մեծամասնության՝ գրաբարում ավանդված հին հայկական ձևերի միջոցով միայն հնդեվրոպական նախաձևերի հետ կապելու փաստը:

Բայց մի կողմ թողնենք հին հայերենին (գրաբարին) նախորդող ընդհանուր փոփոխությունները և մի քանի խոսք ասենք V դարից հետո կատարված փոփոխությունների մասին: Հայտնի է, որ XI դ. Գրիգոր Մագիստրոսը արդեն խոսում էր աւ-ի՝ օ-ի փոխակերպման մի բան, որ տեղի է ունեցել բոլոր բարբառներում. բայց Ս. Ա. Արբանյանի¹ այդ երևույթը կատարվել էր արդեն մինչև X դարը: Եղանակում է մինչև X—XI դդ. բարբառները հիմնականում այնքան առանձնացած չէին, որ նրանց մեջ չտարածվեր միևնույն փոփոխությունը: 1>դ փոխանցումը, որ ըստ Հ. Աճառյանի կատարվել է մինչև IX դ. կեսերը (հմմտ. Բուդա գորավարի անունը), բայց V դարից հետո (հմմտ. V դ. հուն. լ-ն ու ու-ով տառադարձելը) հատուկ է բոլոր բարբառներին. ոչ մի բարբառ աղ բառը ալ ձևով չի պահպանել (ախալի ձևը կա գրաբարում, մինչդեռ բարբառներում պահպանված է սովորաբար փոփոխված ձևով՝ ալնի և ալն): Նշանակում է՝ այդ շրջանում բարբառները դեռ խստորեն չէին տարբերակված: Այս օրինակները ևս կարելի է բազմացնել, բայց այսքանն էլ բավական է ցույց տալու, որ բարբառները մինչև X—XI դդ. ուժեղ կերպով տարբերակված չէին, և որ ժամանակակից բարբառների հիմնական հատկանիշները ձևավորվել են այդ դարերից հետո. իհարկե, չի բացառվում ոչ բարբառային մի շարք գծերի առկայությունը մինչ այդ, և ոչ էլ բարբառային առանձին գծերի՝ գրաբարում ավանդված ձևերից ավելի հին լինելը:

4

Գրաբարի և բարբառների ձևաբանական ու բառակազմական կառուցվածքների և բառապաշարի համեմատությունը ևս մեզ բերում է այն եզրակացությանը, որ գրաբարը ավելի արխայիկ վիճակ է ներկայացնում և ավելի մոտ է հնդեվրոպական հիմնալեզվի վիճակին, քան բարբառներից որևէ մեկը: Եթե մի կողմ թողնենք պրոֆ. Ղաբիրյանի՝ հնդեվրոպական հիմնալեզվի մասին ունեցած սխալ և կասկածելի պատկերացումները, ապա կարելի է ասել, որ հնդեվրոպական հիմնալեզվի թեքական-համադրական տիպը հիմնական գծերով պահպանված է գրաբարում, մինչդեռ բարբառներից ոչ մեկը նման թեքականություն և համադրականություն չունի. բարբառների հոլովման սխեմանում գերակշռում է կցականությունը, խոնարհման սխեմանում՝ նախամասնիկավոր-վերլուծական տիպը: Մական լեզվի արխայիկությունը որոշվում է ոչ միայն այդ լեզվի ձևաբանական տիպով, այլև այն բանով, թե որքան ձևաբանական տարրեր են պահպանվել նրա մեջ. վերջինս նույնիսկ ավելի կարևոր է, և այս տեսակետից բարբառները ոչ մի կերպ չեն կարող համեմատվել գրաբարի հետ: Քննենք հոլովման և խոնարհման մի քանի առանձնահատկությունները ավելի մոտիկից:

¹ Հմմտ. և Ս. Ա. Ա. Արբանյան, Փաստեր հայերենի պատմական հնչյունափոխության մի քանի երևույթների ժամանակաշրջանի վերաբերյալ, Հայկական ՍՍՌ-ի Ա «Տեղեկագիր», (հաս. գիտ.), 1957, № 4:

Հնդեվրոպական հոլովումը, ինչպես նշել ենք, ուներ երկու հիմնական տիպ՝ թեմատիկ և աթեմատիկ. թեմատիկը կազմվում էր *O-ի հետ հերթագայվող *e ձայնավորի միջնորդությամբ, աթեմատիկը՝ առանց դրա. աթեմատիկ հիմքերը վերջանում էին բաղաձայններով և ձայնորդներով՝ ներառյալ նաև *i-ով և *u-ով վերջացող հիմքերը. բացի սրանցից, կարևոր *a-ով վերջացող հիմքով հոլովման տիպը, որ ավելի մոտ էր թեմատիկ հիմքերին, բայց որը արդեն սկսել էր սերտ փոխազդեցություն մեջ մտնել թեմատիկ հիմքերի հետ՝ որպես իգականի տիպ հակադրվելով արական և չեզոք թեմատիկ *e/O-ով տիպերին:

Դեռևս մինչև V դարը կրած փոփոխությունների հետևանքով հայերենը կորցրել է հնդեվրոպական վերջնականները կամ դրանց ձայնավորները. այս պրոցեսը, իհարկե, հատուկ է ոչ միայն գրարարին, այլև բարրառներին, որ վկայում է նրանց սկզբնական ընդհանրություն մասին: Սակայն այնուամենայնիվ գրարարի հոլովման սխառնմը շատ ավելի մոտ է հնդեվրոպականին, քան բարրառներից որե՛կ մեկինը:

1) Գրարարի հոլովման տիպը շարունակում է մնալ թեքական, մինչդեռ բարրառներում այն վերածվել է հիմնականում կցականի՝ եր, ներ և այլ հավաքական մասնիկների՝ հոգնակերտների վերածվելու պրոցեսի հետ կապված: Ինչպես հայտնի է, թեքական լեզուներում նախ՝ ավելի ուժեղ է բաղադրիչների ձուլման աստիճանը և երկրորդ՝ մեկ վերջավորությունը կարող է արտահայտել մի քանի իմաստ: Նույնիսկ այն հանգամանքը, որ գրարարյան հոգնակի թեք հոլովներից մի քանիսի (սեռական, տրական, բացառական) վերջավորությունները կազմվել են *-sko ածանցի բաղաչի վրա, չի խախտել այս կանոնը. այսպես, գրարարյան մարց ժամյրերի» ձևի ց-ն արտահայտում է ն' հոլովը (սեռական-տրական), ն' թիվը (հոգնակի), ինչպես հնդեվրոպականում, որտեղ համապատասխան *māl-r-ōm ձևի *-ōm-ը արտահայտում է ն' հոլովը (սեռական), ն' թիվը (հոգնակի). այլ է վիճակը բարրառներում, որտեղ սովորաբար հոգնակիությունն արտահայտվում է -եր, ներ և այլ տիպի մասնիկներով, հոլովը՝ նույն այն վերջավորություններով, որոնք հատուկ են նաև եզակիին՝ մե-ր-ի-ր-ի (Արարատյան բարրառ), մար-ի-ր-ու (Պոլսի բարրառ) և այլն: Նշելի է, որ գրարարի հնդեվրոպական հիմնալեզվի նման եզակի և հոգնակի թվի համար հոլովական տարրեր վերջավորություններ ունի, մինչդեռ բարրառները և նոր գրական լեզուն դրանք միասնականացրել են՝ եզակիի վերջավորությունները տարածելով հոգնակիի վրա, որ նոր դիժ է: Մենք էլ չենք խոսում այն մասին, որ գրարարում ժհոլովիչ» (իմա՝ թեմատիկ) ձայնավորների առկայությունը մեծ չափով ավելացնում է բառի ձևաբանական բաղադրիչների սերտությունը (հմտ. գետոց, քաղաքաց և այլն), մինչդեռ բարրառներում և նոր գրական լեզվում կազմիչների միացման աստիճանը այնքան էլ սերտ չէ (հմտ. հիշված մե-ր-ի-ր-ի, մար-ի-ր-ու օրինակները):

2) Գրարարը հիմնականում պահպանել է հնդեվրոպական հիմքերի ձայնավորները՝ ն' թեմատիկ հիմքերի *-o-ն (>-ո), ն' աթեմատիկ հիմքերի *-i-ն և *u-ն (>-ի և -ու), ն' *ā-ով հիմքերի *ā-ն (>-ա). հմտ. հոգն. սեռ. գետ-ո-ց, սրտ-ի-ց, գարդ-ու-ց, ամ-ա-ց: Մինչդեռ բարրառներում հիմքերի այս բազմազանությունը վերացել է. նախ՝ տեղի է ունեցել բառի ձևաբանական բաղադրիչների վերատարրալուծում (переразложение). այսինքն՝ եթե

այդ ձայնավորները այս կամ այն չափով պահպանվել են, ապա միայն որպես վերջավորություն անվերջություն տարրեր և ոչ թե հիմքակազմ տարրեր¹։ հմմտ. -ից, -ով, -ում. երկրորդ՝ գերակշռող են դարձել ի կամ ու հոլովումները, որոնք ոչ հնդեվրոպականում և ոչ էլ գրաբարում գերակշռող տիպեր չէին։ Եթե փորձենք համեմատել հնդեվրոպական հոլովման թեկուզ միայն մեկ բառի հոլովման տիպը գրաբարի և բարբառների համապատասխան տիպերի հետ, ապա կզգացվի, թե ղեռ որքան մոտ է հնդեվրոպական տիպին գրաբարը և որքան են հեռացել այդ տիպից բարբառները։

Եզակի

	Հնդեվրոպ.	Գրաբար	Արաբատյան բրբռ.
Ուղղ.	*vedos	զետ	զէզ
Կոչ.	*vede	զետ	զէզ
Հայց.	*vedon	(զ) զետ	զէզ
Սևռ.	*vedosyo	զետոյ	զէզի
Տր.	*vedōl	զետոյ	զէզի(ն)
Բաց.	*vedōd	(ի) զետոյ	զէզից
Դործ.	*vedō, *vedobhi?	զետով	զէզով
Ներդ.	*vedoi	(ի) զետ	զէզըմ

Հողնակի

Ուղղ.	*vedōs	զետք	զէզէր
Կոչ.	*vedōs	զետք	զէզէր
Հայց.	*vedōns	(զ) զետս	զէզէր
Սևռ.	*vedom	զետոց (<*vedosko-)	զէզէրի
Տր.	*vedobh-s	զետոց (<*vedosko-)	զէզէրի(ն)
Բաց.	*vedobh-s	(ի) զետոց (<*vedosko-)	զէզէրից
Դործ.	*vedois, *vedobhis	զետովք	զէզէրով
Ներդ.	*vedoisu	(ի) զետս	զէզէրըմ

Եթե մենք զրանցված չունենալինք մեր լեզվի V դ. վիճակը, ապա թեև լինի չկարողանալինք էլ որոշել, որ -ով կամ -ից վերջավորությունների օ-ն և ի-ն զալիս են հին հնդեվրոպական հիմքային ձայնավորներից։

3) Հնդեվրոպական հոլովման սխառմը բնութագրվում էր ոչ միայն վերջավորությունների փոփոխությամբ, այլև ձայնավորների² և երբեմն էլ

¹ Իմիջիայլոց, պրոֆ. Ղարիբյանը կարծում է, թե «միայն սլավոնական լեզուներն են (էջ 253) հիմքի ձայնավորը փոխանցել վերջավորությանը, մինչդեռ այդ երեւյթը լայն տարածում ունի հնդեվրոպական լեզուներում. այն առաջին անգամ ուշագրություն է արժանացել Բոգոլեն-դե-Կուրտենների կողմից և հետագայում քննվել Կադանի լեզվաբանական դպրոցի այլ ներկայացուցիչների կողմից. այսպես, Բոգորոդիցկին գրում է. «Անվանական և բայական հին ձայնավոր հիմքերի կրճատումը տեղի ունի բոլոր հնդեվրոպական լեզուներում։ Հնդեվրոպական ձևաբանության՝ մեր կողմից ներկայացված ամենից ավելի լայն ընդհանրացումներից մեկը, — շարունակում է նա, — առաջին անգամ արտահայտված է պրոֆ. Բոգոլեն-դե-Կուրտենների կողմից որպես հիմքերի կրճատում հոգուտ վերջավորությունների»։ Проф. В. А. Богородицкий, Очерки по языковедению и русскому языку, М., 1939, էջ 193։

ձախորդների հերթագայությունը: Այս առումով, եթե զրաբարը գեռևս նշանակալից չափով պահպանել է հնդեվրոպական հերթագայությունների սխեման հետքերը, ապա բարբառներում դրանք կամ լիովին անհետացել են, կամ առկա են լոկ որպես առանձին բեկորներ, որոնք հաճախ անհասկանալի են առանց զրաբարի հետ համեմատվելու: Իերենք մի քանի օրինակ:

Ն-ով և ր-ով վերջացող զրաբարյան հիմքերը պահպանել են հնդեվրոպական ձախորդների հերթագայության (ձախգարծի), այլև ձախորդների արևմտյան հերթագայության հետքերը, որոնք բարբառներում զրեթե անհետացել են: Հնդեվրոպական հիմնալեզվի արևմտյան *r/n հերթագայությամբ բնութագրվող հոլովմամբ հետքեր է թողել զրաբարյան բարձր, մանր և այլն ածականների հոլովման մեջ (բարձր-բարձու-բարձամբ-բարձուց-բարձաց, մանր-մանու-մանու-մանուց-մանուց), մինչդեռ այդ ածականների հատուկ տիպի հոլովումը և հերթագայությունը բարբառներում առանձին հետքեր չեն թողել: Հնդեվրոպական *n-ով հիմքերի *ō-n [(-ēn)] ~*ŋ հերթագայությունը գրեթե անհետացել է, ասենք, զրաբարի հարսն-հարսին-հարսամբ-հարսուց տիպի հոլովման մեջ -ին-ուն-ան ձևով, մինչդեռ բարբառներում այս հերթագայությունը, որքան մեղ հալանի է, կամ հետք չի թողել, կամ շատ աննշան հետք է թողել: Գրաբարի այսպես կոչված անկանոն բառերի հոլովման մեջ լայն չափով արտահայտվել են հնդեվրոպական հերթագայության դանազան գրեթե անհետացած, մինչդեռ բարբառներում պահպանվել են լոկ այնպիսի բեկորներ, որոնք առանց զրաբարի հետ համեմատելու դժվար է անմիջապես կապել հնդեվրոպականի հետ. այսպես, զրաբարի մայր, սեռ. մաւր ձևերը հեշտ է անմիջապես կապել *māter, սեռ. *matros ձևերի հետ, բայց բարբառային սեռական մեք, մօր ձևերը անմիջականորեն հիշյալ ձևերից չեն կարող բխել: առանց մայր, մաւր անործանների. զրաբարի քոյր, սեռ. քեռ ձևերը հեշտությամբ կարելի է կապել հնդեվրոպական *swesōr, սեռ. *swesros ձևերի հետ, մինչդեռ, ասենք, բարբառային քօր ձևը անմիջապես հնդեվրոպական սեռականի հետ չի կապվում, այլ հայր, մայր, եղբայր բառերի հօր, մօր, եղբոր ձևերի անալոգիայի արդյունք է. այդ նույն ձևով էլ Պոլսի բարբառի քրօ սեռականը անմիջապես չի կապվում հնդեվրոպական սեռականի հետ, այլ արդյունք է զրաբարի կին բառի սեռ. կնոջ ձևի անալոգիայի. իմիջիպիսի, խիստ հատկանշական է, որ Պոլսի բարբառում կին բառը պահպանված է գնիգ, սեռ. գնգան ձևով, և, հետևաբար, առանց զրաբարը խմանալու մենք չենք կարող բացատրել քրօ ձևի ծագումը (կնոջ ձևի ազդեցություն լինելը):

Պրոֆ. Լարիբյանի տեսության օգտին չի խոսում նաև զրաբարի և բարբառների խոնարհման սխեմաների ամենաթուլից համեմատությունը հնդեվրոպականի հետ: Այնհայտորեն երևում է, որ զրաբարի խոնարհման ձևերը ավելի մոտ են հնդեվրոպական հիմնալեզվի ձևերին, քան բարբառների: Վերջինք ներկա ժամանակը, որի կադմությունը հենց հիմք է ծառայում հայերենի բարբառների ձևաբանական դասակարգման համար: Ինչպես հայտնի է, հնդեվրոպական ներկան չի ուղեկցվել մասնիկներով և գերբայական ձևով չի կադմվել, մինչդեռ բարբառներում գերակշռում են հենց մասնիկավոր և գերբայական ձևերը: Այս տեսակետից զրաբարը անհամեմատ ավելի մոտ է հնդեվրոպականին, քան բարբառներից որևէ մեկը (ներառյալ նույնիսկ զրաբարատիպ խոնարհում ունեցող բարբառները): Ահավասիկ մի համեմատություն.

Հնգելիրոպ. Սանսիրիտ Հունարեն Գրաբար Սրար. բրբռ. Մշո բրբռ.
հիմնադրու

Եղակի

*bhero(-mi)	bharami	բժրա	բերեմ	բերում եմ	կըբերեմ
*bheresi	bharasi	բժրես	բերես	բերում ես	կըբերես
*bhereti	bharati	բժրե	բերէ	բերում ա	կըբերի

Կարելի է կասկածել, որ գրաբարյան ձևերը ավելի մոտ են հնգելիրոպական հիմնադրվի և հնգելիրոպական հին լեզուների ձևերին, քան բարբառային ձևերը: Իլ չենք խոսում այն մասին, որ գրաբարն ունի հնգելիրոպականից եկող և բարբառներում արդեն անհետացած այնպիսի գծեր, ինչպիսիք են ց-ով (<*sk-) ստորադասականը, ջ-ով (<*dhi, հմմտ. հուն. -δι-) հրամայականը և այլն:

Մարահյուսական առումով նույնպես գրաբարը ակնհայտորեն ավելի մոտ է հնգելիրոպական վիճակին, քան բարբառները և գրական աշխարհարարը. այսպես, հնգելիրոպական հիմնադրված որոշչի և որոշչալի համաձայնությունը ընդհանրապես պարտադիր էր, գրաբարում պարտադիր էր որոշ գեղեցկում, բարբառներում և նոր գրական լեզվում այնպիսի համաձայնեցում տեղ չուներ. հնգելիրոպական հիմնադրվի նախադասությունների շարադասությունն ազատ էր, գրաբարում՝ գրեթե նույնպես, մինչդեռ բարբառներում հանգես է գալիս որոշ սահմանափակում՝ պայմանավորված որոշչի ու որոշչալի համաձայնեցման և մի շարք այլ կանոնների վերացմամբ. հնգելիրոպական հիմնադրված խոսուրեն ընդգծված էր անվանական և բայական նախադասությունների հակադրությունը, գրաբարում այդ տարբերությունը գրեթե նույնքան խիստ է, մինչդեռ, ասենք, արևելահայ բարբառներում և գրական արևելահայերենում ներկալի և անցյալ անկատարի գերբայական կառուցվածքի շնորհիվ այդ տարբերությունը այլևս նույն խստությունը չունի (հմմտ. գրաբարի գևում ու մարդ եմ և արևելահայ գրականի գևում եմ ու մարդ եմ ձևերը):

Նույն վիճակը կատարվի, եթե մենք փորձենք համեմատել հնգելիրոպական հիմնադրվի հետ գրաբարը և բարբառները բառակազմական և բառապաշարային առումով: Գրաբարը պահպանել է հնգելիրոպական ծագում ունեցող բառակազմական ավելի շատ ածանցներ և ավելի շատ արմատներ, քան բարբառներից որեէ մեկը. արդ ածանցներն ու արմատներն էլ իրենց հնչյունական կազմությամբ սովորաբար շատ ավելի մոտ են հնգելիրոպական վիճակին, քան բարբառներին: Դեռ ավելին. կարելի է առանց կասկածի ասել, որ ժամանակակից բոլոր բարբառները միասին վերցրած չեն պահպանել հնգելիրոպական ունեցած ածանցական մասնիկներ և արմատներ, որքան գրաբարը: Իրեն ընդհանուր կանոն, նախ՝ բարբառների ածանցական մասնիկները գրաբարի համապատասխան մասնիկների համեմատությամբ ենթարկվել են այնպիսի հնչյունական փոփոխությունների, որոնք նրանց մեծ չափով հեռացրել են հնգելիրոպական վիճակից. հմմտ. գրաբար -ուրիւն (<հնգ. *-u-ti-ŋn) և բրբռ. -ուրին (Սրարատյան, Թբիլիսիի և այլն). երկրորդ՝ հոլովիչ ձայնավորների գերի կորստի կապակցությամբ հնգելիրոպական նախկին ածանցական մասնիկները էլ ավելի են հեռացել հնգելիրոպական նախատիպերից. հմմտ. սևական հոլովաձևերը. գրաբարյան գերբայական -լոյ (<*lo-) և բրբռ. -լու, -լի, գրաբար մարդոյ (<*mrtošyc) և բրբռ. մարքու, մարքի և այլն:

Եվ այս բանը լիովին հասկանալի է. չի կարող մի լեզվի հին միձակը ավելի նոր լինել, քան նոր վիճակը, ինչպես պատկերացում է պրոֆ. Ղա-րիբյանը: Ժամանակակից հայերենի բարրառները հենց ժամանակակից հայե-րենի բարբառներ են, որոնք հայոց լեզվի զարգացման ընթացքին համապա-տասխան փոփոխություն են ենթարկվել: Ժամանակակից հայերենի բարբառ-ները ավելի հին համարել, քան զրաբարը, կնշանակելու ուսմանական լեզու-ները ավելի հին համարել, քան լատիներենը, նոր հնդկական լեզուները ավելի հին համարել, քան սանսկրիտը և այլն:

»

Եթե ամփոփելու լինենք վերևում առածները և փորձենք ընդհանուր կերպով ձևակերպել հայ բարբառների ծագման և զարգացման վերաբերյալ մեր ունեցած պատկերացումները, ապա կարող ենք նշել հետևյալը.

1) Ինչպես ցույց ենք ավել մեր «Հայոց լեզվի պատմության պերիոդի-զացիայի հարցերը» հոդվածում¹, հայոց լեզվի խոսկական գիտական քննությունը պահանջում է այն առնել իր բոլոր տարբերակների ամբողջությամբ. չի կարելի այդ պատմությունը վերածել միայն զրական լեզվի պատմության, դուրս թողնել զրական լեզվի խոսակցական տարբերակի և բարբառների ամ-բողջությունը. այս տեսակետից չի կարելի «զրաբար» բառին սույն մի ավելի ընդարձակ իմաստ, քան նա ունի. զրաբարը ոչ այլ ինչ է, եթե ոչ հին շրջանի զրական լեզուն, որ իր գոյությունը պահպանել է և հետագա շրջանում, բայց իր բառապաշարային, քերականական և հնչյունական առանձնահատկու-թյուններով արտացոլում է միայն որոշ շրջանի (հայոց լեզվի զարգացման հին շրջանի) առանձնահատկությունները: Հիշված հոդվածում տարբերելով հայոց լեզվի զարգացման նախադրային և գրային փուլերը, մենք գրային փուլը բաժանել ենք 3 շրջանի՝ հին, միջին և նոր. հայոց լեզվի զարգացման պատմությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ հայ համաժողովրդական լեզվի պատմությունը. հայ համաժողովրդական լեզուն իր բոլոր տարբերակ-ներով հանդերձ կոչել ենք հին հայերեն (V—XI դդ.), միջին հայերեն (XII—XVI դդ., ընդ որում XV—XVI դդ. առանձնացրել ենք որպես աշխարհարարացման ենթաշրջան) և նոր հայերեն կամ աշխարհարար (XVII դարից մինչև մեր օրերը): Հասկանալի է, որ հայերենի բարբառների պատմությունը չի կարելի կարել հայոց լեզվի ընդհանուր պատմու-թյանից. հայոց լեզվի պատմության միջին շրջանը իր բոլոր տարբերակների (այդ թվում և բարբառների) ամբողջությամբ կազմում է հին շրջանի հետագա զարգացումը, նոր շրջանն էլ՝ միջինի շարունակությունը, ընդ որում միջին հայերենի սաղմերը զարգացել են հնի ընդերքում, նորինը՝ միջինի: Այս պարզ ճշմարտությունից բխում է, որ պետք է համապատասխանաբար տարբերել հին շրջանի կամ հին հայերենի բարբառներ, միջին շրջանի կամ միջին հա-յերենի բարբառներ և նոր շրջանի կամ նոր հայերենի բարբառներ. սակայն չի կարելի կարծել, որ նոր շրջանի բարբառները ուղղաթորին գալիս են մի-ջին շրջանի բարբառներից, որանք էլ՝ հին շրջանի բարբառներից, վերջիններս

¹ Երևանի Պետական համալսարանի «Գիտական աշխատություններ», հ. 57, I մաս, Երևան, 1956:

էլ՝ նախահինհայերենյան (նախագրաբարյան) շրջանի բարբառներից. հիշտ է, տանք, սր միջին շրջանը հին շրջանի շարունակությունն է, բայց որպես ամբողջություն, որի ալս կամ ալն տարբերակը ոչ միշտ կարող է ուղղագծորեն բխել նախորդից. ալս կամ ալն շրջանում կարող են տեղի ունենալ բարբառային հատկանիշների վերախմբավորումներ, ընդհանուր (գրական) լեզվի բարբառային հիմքի տեղաշարժ, նոր բարբառների առաջացում նախորդ բարբառների կամ նույնիսկ ընդհանուր խոսակցական լեզվի տարբերակմամբ, բարբառների մերձեցում, շնորհիվ նրանց՝ միեւնույն անբնորոշ աւբողջության մեջ խմբավորվելու և ալն: Հարցի հետևողական պատմական քննությունը պահանջում է բարբառների պատմությունը դիտել հայոց լեզվի պատմության, նրա տարբերակների ամբողջության և ալս տարբերակների փոխհարաբերության մեջ կատարված տեղաշարժերի հետ սերտորեն կապված, ըստ հայոց լեզվի պատմության շրջանների. պետք է կոնկրետորեն նկատի առնել, թե հայոց լեզվի պատմության տվյալ շրջանում ինչ տեղաշարժեր են կատարվել բարբառների փոխհարաբերության մեջ, բարբառային ինչ գծեր են առկա, ինչի վրա պետք է հիմնել տվյալ շրջանի դասակարգումը և ալն. ալս բոլոր դեպքերում պետք է նկատի առնել հայ ժողովրդի պատմության կոնկրետ պայմանները:

Հայերենի ոչ մի բարբառ որևէ էպոխայում իր բոլոր գծերով լիովին կադմավորված հանգես չի եկել և չէր էլ կարող հանգես դալ: Հայերենի բարբառների հնչյունական, քերականական և բառապաշարային հատկանիշները ձևավորվել են հայերենի պատմության ողջ ժամանակաշրջանում՝ պատմական տվյալ պայմաններից կախված ուժեղանալով, թուլանալով կամ նույնիսկ ընդհատվելով և պատմական տվյալ պայմաններում տալով բարբառային տվյալ խմբավորումները: Հայերենի բարբառային տարբերակումները, նրանց հատկանիշներն ու դասավորությունը ալ բնույթ էին կրում մինչև V դարը, ալ բնույթ՝ V դարից հետո մինչև XI դարը, ալ բնույթ՝ XI դարից հետո, ալ բնույթ՝ մեր օրերում: Մինչև XI—XII դդ. հայ բարբառների տարբերությունները դերադանցապես հնչյունական-բառապաշարային էին: XII դարից, ալ տարբերությունների աճման հետ միասին, սկսում են դերադանցի գերք գրավել ձևաբանական տարբերությունները՝ միջին շրջանի վերջում հասցնելով ժամանակակից բարբառների հիմնական գծերի կադմավորմանը: XVII դարից սկսած բարբառների տարբերակման պրոցեսը դադարում է ինտենսիվ լինելուց՝ շնորհիվ միասնականացնող տեղեկանքների աճման: Սովետական շրջանում բարբառներն ակնհայտորեն տեղի են տալիս գրական լեզվի հանդեպ:

2) Թեև բարբառների դարգացման նախահինհայերենյան (նախագրաբարյան) շրջանի վերաբերյալ մեր տեղեկությունները քիչ են, բայց մի քանի հետևություններ կարելի է անել. ա) պետք է նկատի ունենալ, որ լեզվի փոփոխությունների պրոցեսը նույն արագությամբ չի կատարվում պատմական տարբեր էպոխաներում. «Հայտնի է, — գրում է բուլղարացի նշանավոր հնդեվրոպաբան Վ. Գեորգիևը, — սրի կարծիքով հնդեվրոպական լեզուների կադմավորման պրոցեսը տեղի է ունեցել ոչ թե մ. թ. ա. III, ալ V—IV հազարամյակներում, — որ նախնադարյան համայնական հասարակարգում հասարակական կյանքի և լեզվի փոփոխությունների պրոցեսը տեղի է ունենում այնքան ավելի դանդաղ, որքան մենք ավելի խորն ենք թափանցում հազարամյակ-

նրի խորքը (ընդգծումը հեղինակինն է—Գ. Ջ.). ամենափոքր փոփոխությունների համար ալն ժամանակ պահանջվում էին ոչ թե հարյուրամյակներ, այլ հազարամյակներ: Հետևաբար, այդ փոփոխությունները ենթադրում են զարգացման շատ երկարատև պրոցես, որի շրջանակներում սկզբնական հնդեվրոպական հիմնալեզվից կարող էր առանձնանալ առանձին լեզուներ: Բ) նախահինհայերենյան (նախադարարյան) շրջանում այս կամ այն չափով հայերենի մեջ գերակշռել են միասնականացման տենդենցները՝ կապված հայ ցեղախմբի և հայ ժողովրդի կազմավորման պրոցեսների հետ. հասկանալի է, որ այս հանգամանքը պետք է խանգարեր բարբառային ուժեղ տարբերությունների զոյացմանը. Գ) հայերի քանակը հնդեվրոպական հիմնալեզվից անջատվելուց հետո շատ երկար ժամանակ չէր կարող մեծ լինել, և, հետևաբար, բարբառային ուժեղ տարբերությունների զոյություն համար ուժեղ հիմքեր չկային. Դ) հայերենի՝ հնդեվրոպական հիմնալեզվից անջատվելու և կազմավորվելու պրոցեսը երկարատև պրոցես է եղել, որի սկզբնական շրջանում հայերենը չէր կարող քիչ թե շատ ուժեղ բարբառային տարբերակումներ ունենալ. և այդ ալն պարզ պատճառով, որ նրա ունեցած տարբերությունները մյուս լեզուներից դեռ նոր էին զարգանում բարբառային տարբերություններ լինելուց և նոր էին վերածվում լեզվական տարբերությունների. դեռ ավելին, հայերենը սկզբնապես դեռևս մոտ պետք է լիներ այլ հնդեվրոպական լեզուների, որոնք կորել են կամ թերևս մասամբ ձուլվել հայերենի հետ՝ տուլով սուրբաբառային որոշ տարբերություններ. հայերենի մերձավոր լեզուներից են հավանաբար թրակա-փոլուզիական լեզուները, որոնց հնազույն հուշարձանները մ. թ. ա. V դարից են սկսվում և որոնք իրենց բաղաձայնական սխտեմով արդեն մոտ են հայերենին:

3) Բարբառների ծագման ու զարգացման՝ վերևում շարադրված բմբրումը բնականաբար հիմք է տալիս մի շարք մասնակի հետևությունների համար. ա) սխալ պետք է համարել ալն կոնցեպցիան, թե մեր ժամանակակից բարբառները ծագում են զրաբարից և նրա հետագա աղավաղումներն են. զրաբար ասելով պետք է հասկանալ հին զրական հայերենը, իսկ զրական լեզուն չի կարող սկիզբ տալ բարբառների. եթե զրաբար ասելով հասկանանք նույնիսկ հին շրջանի բնահանուր լեզուն՝ իր նորմավորված զրական և խոսակցական տարբերակներով, ապա ալն իր խոսակցական ձևով դարձյալ չի կարող դիմել որպես հետագա բոլոր բարբառների մայրը. ալն անսակետը, թե բարբառները ընդհանուր լեզվի աղավաղումներն են անկիրթ խավի բերանում, հանդես է եկել նախքան պատմա-համեմատական լեզվաբանության ձևավորումը, երբ բացակայում էր իսկալան պատմական հայացքը լեզվի նկատմամբ. այսպես՝ եվրոպայում այս կարծիքն սկիզբ է առել XVII դ. գերմանացի քերական Շոտտելից. սակայն այս չի նշանակում, թե բարբառների պատմական քննությունը կատարելիս չպետք է դիմել զրաբարին. վերջինս արտացոլում է հայոց լեզվի զարգացման մեղ հայտնի վիճակներից հնագույնը և թեև զաղափար չի տալիս հին հայերենի բոլոր տարբերակների մասին, բայց զաղափար է տալիս հին հայերենի հիմնական առանձնահատկությունների մասին, մանավանդ որ V դարում հայոց լեզվի տարբերակվածու-

¹ В. И. Георгиев, Проблема возникновения индоевропейских языков, ВЯ, 1956, № 1, էջ 46:

թյունը այնքան ուժեղ չէր, ինչ XII դարից սկսած. եթե մեզ մոտ ստեղծվի իսկական պատմական բարբառագիտությունը, և պատմա-համեմատական մեթոդի հմուտ կիրառումը հնարավոր դարձնի բարբառային այն հնագույն ձևերի վերականգնումը, որոնք դրաբարում չեն արձանագրված, այդ դեպքում մենք կունենանք հին հայերենի ավելի բազմակողմանի իմացում. բ) ժամանակակից բարբառների շատ գծեր բացատրվում են հին հայերենի՝ դրաբար տեքստերում արձանագրված փաստերով. սակայն կան այնպիսի արխայիկ գծեր, որոնք ավելի մոտ են հնդեվրոպականին կամ փոխառու աղբյուրներին, քան դրաբարի ավանդված ձևերը. երբեմն էլ առկա են դրաբարում չավանդված արխայիկ բառեր ու բառաձևեր. հասկանալի է, որ սրանց հմուտ (և ոչ թե հապճեպ ու ձախ ու ծուռ) ուսումնասիրությունը, որի սկիզբը դրել է Հ. Աճառյանը, մեր բարբառագետների պատվավոր գործը կլինի. այս պայմանները կատարելուց հետո միայն կարելի կլինի խոսել իսկական գիտական բարբառագիտության մասին. այսպիսով, ամեն մի բարբառ կարող է պահպանած լինել դրաբարից ավելի արխայիկ ձևեր, բայց ընդհանուր առմամբ վերցրած դրաբարը մեր ժամանակակից բոլոր բարբառներից էլ հին է, նրանցից ավելի շատ է պահպանել հին գծեր և իր խոսակցական ձևով այդ բարբառներից շատերի բազմաթիվ առանձնահատկությունների սաղմերի կրողն է. դ) վերևում ասածից հետևում է, որ հայ բարբառագետների համար երկրորդական հարց չէ այն հարցը, թե ավելի բարբառի առանձնահատկությունները վեր հանելիս ինչը պետք է մեկնակետ ընդունվի. լեզվաբանների մի մասը, ինչպես, օրինակ, Ա. Տոմսոնը և Լ. Մսերյանցը Բրիլիսիի և Աշո Բարբառի քննությունը կատարում են առաջին հերթին հնդեվրոպական նախալեզվի հետ համեմատելու միջոցով. մյուս մասը, ինչպես Հ. Աճառյանը և Է. Աղայանը, իրենց քննարկած բարբառները համեմատում են դրաբարի հետ. կան բարբառագետներ էլ, որոնք պահանջում են քննությունը կատարել ժամանակակից գրական լեզվի հետ համեմատելու միջոցով. վերջին տեսակետը գիտական լուրջ հիմնավորման դեպքում զուրկ չի լինի որոշ շահեկանությունից: Կան մարդիկ էլ, որոնք տարբեր շրջաններում պաշտպանել են տարբեր տեսակետներ և երբեմն էլ էկեկտիկորեն դուգորդել այս բոլոր տեսակետները: Բարբառային հընչյունների ու փերականական ձևերի համեմատության ելակետի հարցում եղած տարբերությունները որոշ դեպքերում արտացոլում են նաև հայերենի բարբառների ծագման հարցի տարբեր ըմբռնումները: Այսպես Դ. Պատկանյանը, Ա. Տոմսոնը և Լ. Մսերյանցը այն կարծիքին են, որ դրաբարի շրջանում արդեն գոյություն է ունեցել բարբառային ուժեղ տարբերակում: Ք. Պատկանյանը կարծում է, որ հայերենի ժամանակակից բարբառները հին հայկական ցեղային խոսվածքների շարունակությունն են, և բարբառների ուսումնասիրությունը երևան կհանի բազմաթիվ այնպիսի գծեր, որոնք դրաբարից չեն դալիս: Տոմսոնը և Մսերյանցը տարբերում են դրաբարը (հին հայերենը) ընդհանուր հայերենից: Սակայն և՛ Պատկանյանը, և՛ Տոմսոնը, և՛ Մսերյանցը դրաբարի բաղաձայնական տեղաշարժին, որ նրանք կոչում են առաջին տեղաշարժ (շնչեղ-ձայնեղների վերածում ձայնեղների, ձայնեղների վերածում խուլերի, խուլերի վերածում շնչեղ խուլերի) և հակադրում արեմըտահայ բարբառային երկրորդ տեղաշարժին (ձայնեղների վերածում խուլերի, խուլերի վերածում ձայնեղների),-- ընդհանուր բնույթ են հատկացնում. այսպես, Տոմսոնը գրում է. «... կարելի է լիովին միանալ պրոֆ. Ք. Պ.

Պատկանովի առածին „Исследование о составе армянского языка“ աշխատության մեջ, էջ VI—VII, այն է՝ որ արևելյան խումբը, որին պատկանում է և գրաբարը, համարյա անձեռնմխելի կերպով ներկայացնում է այն տեսքը, որ ունեին ողջ հայերենի բաղաձայնները առաջին բարդ տեղաշարժից հետո¹։ Տոմսոնը և Մսերյանցը խոսելով նախքան գրաբարը (հին հայերենը) մի ընդհանուր հայերենի գոյության մասին, որ, ըստ նրանց, տրոհվելով տվել է բարբառները, փաստորեն վերջինս հնչյունապես նույնացնում են հին հայերենի հետ՝ ցույց տալով միայն խիստ մասնակի մի երկու տարբերություն (Տոմսոն) կամ հույսը դնելով ապագայի վրա, որ թերևս երևան կհանի այդ ընդհանուր հայերենի պատկերը (Մսերյանց)։ Տոմսոնը, — ինչպես նշում էր Մառը Տոմսոնի «Թիֆլիս քաղաքի ժամանակակից հայերեն լեզվի պատմական քերականության» վերաբերյալ գրախոսականում և ինչպես փաստորեն ընդունում էր նաև ինքը իր պատասխանում, — տարբերելով հին հայերենը (գրաբարը) ընդհանուր հայերենից, հնչյունապես գրանց փաստորեն նույնացնում է. նշվում է միայն, որ հնդեվրոպական *s և *r հնչյունների դիմաց բարբառները ունեն հ, մինչդեռ գրաբարը այդ հ-ն կորցրել է (հմտ. լատ sorbeo, գր. արբեմ, բրբռ. հարբել)։ Պետք է նշել, սակայն, որ նախ՝ Տոմսոնը և Մսերյանցը բարբառի հնչյուններն ու ձևերը համեմատում են ոչ միայն հնդեվրոպական, այլև գրաբարի հնչյունների ու ձևերի հետ. երկրորդ՝ Պատկանյանը, Տոմսոնն ու Մսերյանցը պարզեցված զաղափար ունեն հայերենի բարբառների հնչյունական տեղաշարժերի մասին. Մսերյանցը Մշո բարբառին նվիրված իր ընդարձակ հետազոտության մեջ չի նկատում նույնիսկ այդ բարբառում շնչեղ-ձայնեղների առկայությունը։ Այսպիսով, Պատկանյանի, Տոմսոնի և Մսերյանցի տեսակետները կապված են հալ բարբառադիտության սկզբնական որոնումների շրջանի հետ, երբ կարծվում էր, թե բարբառների բազմակողմանի ուսումնասիրությունը գրաբարից տարբեր և գրաբարով չբացատրվող շատ բան երևան կհանի։

Ինչպես պետք է վարվել այս դեպքում, որն է մեր կարծիքը։ Մեր կարծիքով այս բոլոր դեպքերում մենք գործ ունենք բարբառների նկատմամբ անբավարար պատմական մոտեցման, ժամանակակից պատմա-համեմատական լեզվաբանության կարևոր սկզբունքներից մեկի՝ լեզվակառուցվածքի բաղադրիչների ժամանակագրական տարբերակման սկզբունքի անբավարար կիրառման հետ։ Եստ բարբառապետներ կամա թե ակամա բարբառները ներկայացնում են որպես բոլոր բաղադրիչներով միանգամից կազմավորված ամբողջություններ, ուրիշներն էլ գրանց դիտում են որպես իրենց բոլոր հատկանիշներով անփոփոխ կերպով գոյություն ունեցող մետաֆիզիկ միավորներ։ Հաշվի չի տոնվում այն պարզ ճշմարտությունը, որ հալոց լեզվի զարգացման տարբեր շրջաններում գոյություն է ունեցել բարբառների տարբեր քանակ, բարբառային տարբերությունների տարբեր խորություն ու հարաբերակցություն և որ տարբեր շրջանների համար պետք է կիրառել տարբեր սկզբունքներ։ Մեր պատմական բարբառադիտությունը գտնվում է գեոևս ձևավորման պրոցեսում։ Տարբերելով հին շրջանի, միջին շրջանի և նոր շրջանի հայկական բարբառներ և գրանց դիտելով որպես հալ համաժողովրդական լեզվի զարգացման հաջորդական և ժառանգորդաբար կապված ամբողջություններ

¹ А. Томсон, Лингвистические исследования, СПб, 1887, էջ 11։

մենք կարծում ենք, որ բարբառներն ուսումնասիրելիս նրանց նկատմամբ պետք է տարբերակված մոտեցում ունենալ. բարբառները միանգամից չեն կազմավորվել. նրանց տարբեր բաղադրիչները գալիս են տարբեր հնությունից, տարբեր երևույթների ոչ հավասարաչափ կերպով են բաշխվել հայ բարբառների տարածման տերիտորիայում՝ նայած պատմական տվյալ շրջանի պայմաններին, տնտեսական, քաղաքական և աշխարհագրական գործոնների տարբեր փոխազդեցությանը: Այս առումով բարբառների մեջ կան անպիսի երևույթներ (քերականական ձևեր, բառերի հնչյունական տարբեր ձևավորումներ, գրաբարում և միջին հայերենում չվկայված բառեր), որոնք գալիս են խորը հնությունից և որոնք բնականաբար պետք է համեմատել այն աղբյուրի հետ, որտեղից նրանք ծագում են. այստեղ մեզ օգնություն է գալիս համեմատական քերականությունը՝ հնդեվրոպական հիմնալեզվի վերականգնման իր տվյալներով. դժբախտաբար, ուսումնասիրության ենթարկված այս կարգի երևույթները փոքր թիվ են կազմում¹: Կան անպիսի երևույթներ, որոնք կարող են հանգեցվել գրաբարի հուշարձաններում վկայված հին հայերենի երևույթներին. գրանք մեծ թիվ են կազմում և պետք է խնամքով ի մի բերվեն: Կան երևույթներ էլ, որոնք հատուկ չեն գրաբարին, բայց չեն գալիս և հնդեվրոպական նախալեզվից, այլ տարածված են կամ բոլոր բարբառներում, կամ բարբառների տվյալ ճյուղում ու խմբում, կամ տվյալ ենթաճյուղում ու ենթախմբում, կամ տվյալ բարբառում, կամ տվյալ բարբառի միայն տվյալ խոսվածքում, կամ արդյունք են գրական լեզվի ազդեցության. այս բոլոր դեպքերը պետք է տարբերվեն, և յուրաքանչյուր դեպքում համեմատությունը պետք է կատարվի տարբեր պլանով: Գ) Մեր կարծիքով անհրաժեշտ է վերանայել նաև հայ բարբառաճյուղերի անվանումների հարցը, անվանումներ, որոնք տրված են ոչ պատմական հիմունքով: Մեր բարբառագիտական գրականության մեջ գործածվում են ում, իլ կամ լ, ս, կը, կա, հա անվանումները, որոնք միասնական սկզբունքի չեն ենթարկված և առնված են առանց պատմական հեռանկարի. անվանումները տալիս նախ՝ ըստ հնարավորին պետք է ելնել պատմական այն վիճակից, երբ տվյալ հատկանիշն ունեցող բարբառները տերիտորիապես մերձ էին իրար. այլապես, դիցուք, Կարնո բարբառ անվանումը լրիվ կորցնում է իր արժեքը, երբ նկատի ենք առնում, որ նրանով խոսողների զանգվածը այժմ կենտրոնացած է գերազանցապես Ախուլքալաքում և Լենինականում. երկրորդ պետք է նկատի առնել, որ հիմք ընդունված հատկանիշները բարբառներում փոփոխվել են երբևէ մինչև անճանաչելիության աստիճան. և անվանումը չի փրկում դործը, որովհետև, որոշ դեպքերում Վ-ն որպես ներկայի կազմիչ կորել է: Քանի որ բարբառների այժմյան դասակարգումը գերբայական կազմությամբ և գրաբարատիպ-մասնիկավոր ճյուղերի կամ ավելի ճիշտ՝ խմբերի համընկնում է արևելահայ և արևմտահայ բարբառների տրադիցիոն տարբերակման հետ, որ արդարացվում է նաև պատմականորեն, ուստի և մենք կարծում ենք, որ մեր բարբառագետները պետք է վերանայեն հիշյալ անվանումները. մեր «Հայոց լեզվի պատմության պերիոդիզացիայի հարցերը» հոդվածում մենք գրել ենք, որ

¹ Հմմտ. Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Բ մաս, Երևան, 1951, է. Աղայան, Բարբառային հնագույն տարբերությունները հայերենում, Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1958, № 5:

մեր ժամանակակից բարրապահությունն են երկու խմբի՝ արևմտահայ և արևելահայ, կամ, եթե նկատի ունենանք սահմանական ներկայի կազմության եղանակը՝ գրաբարատիպ-նախամասնիկավոր (գրաբարատիպ և կու, կա, հա մասնիկներով) և գերբայակազմ (ու՛մ, ել-ալ, լիւ)՝, ապա ժանրություն մեջ նշում ենք, որ ճշգրիտ հատկանիշները տալիս մենք հիմք ենք ընդունում ծագումը, այլապես դրանք բարրապահությունն են տարբեր կերպարանքներ¹:

4) Մեր բարրապահության մենագրություններն ու գաղափարները գեո շատ հեռու են կատարյալ լինելուց. դեռ ավելին, նրանք ակնհայտորեն հետ են մնում ժամանակակից գիտության մակարդակից: Այդ մենագրություններին քիչ թե շատ ուշադիր կերպով հետևողը չի կարող չնկատել, որ դրանք կառուցվում են միևնույն կաղապարով և գրեթե բոլորն էլ իրենց վրա կրում են սխեմատիզմի կնիքը: Մեր բարրապահները ջանք չեն թափում որոնելու բարրապահների ուսումնասիրության ավելի քիչ տրոփած ուղիներ, օգտագործելու լեզվաբանական աշխարհագրություն, ժամանակակից հնչյվածաբանության (ֆոնոլոգիայի), ժամանակակից փորձական հնչյունաբանություն, ժամանակակից լեզվաբանական վիճակագրության նվաճումները: Դնալով թույլ գիմագրության ուղիով՝ մեր բարրապահները բավարարվում են ուսումնասիրվող բարրապահի կամ խոսվածքի միևնույն կաղապարային և մեծ մասամբ սխեմատիկ նկարագրությամբ, աշխատում որքան կարելի է հեշտացնել իրենց գործը և գիտական խոր ու բազմակողմանի ուսումնասիրության փոխարեն մատուցում կիսակատար աշխատություններ: Դրանց մեջ խիստ կերպով պարզեցվում է բարրապահների փոխհարաբերության բարդ պատկերը, չի պարզարանվում բարրապահի և նրանով խոսող զանգվածի պատմական փոխհարաբերությունը, չեն օգտագործվում ազգագրության, գաղափարաբանության, պատմության, աշխարհագրության և այլ մերձակա գիտությունների ու գիտական դիսցիպլինաների տվյալները: Մեր բարրապահները այս գեղարվեստ փոխ են առնում անվանի հայագետ Հ. Աճառյանի աշխատությունների կաղապարը՝ մոռանալով, որ Հ. Աճառյանը իր ժամանակի գիտության մարդն էր և հնարավորություն չուներ օգտագործելու ժամանակակից լեզվաբանության մի շարք նվաճումները: Նրանք, սակե՛վ բացառություններ, ընդօրինակում են Հ. Աճառյանի բարրապահության մենագրությունների կաղապարն ու թերությունները՝ առանց կարողանալու հանդես բերել միևնույն արժանիքները: Սրա հետևանքով հանդես են գալիս աշխատություններ, որոնց ստույգությունը կասկածի տեղիք է տալիս, որոնց տեղեկությունները խիստ հեռու են բազմակողմանիությունից և որոնց մեջ խառնված են նկարագրական ու պատմական հայեցակետերը՝ առանց մեկի կամ մյուսի հետևողական կիրառման: Փաստերի մանրակրկիտ ու բազմակողմանի ուսումնասիրություն և դրանցից արվող անկողմնակալ, ճշգրիտ և գիտականորեն հիմնավորված եզրակացություններ — այս է սովետահայ բարրապահությունից պարզացման միակ հնարավոր ուղին:

¹ Պետական համալսարանի «Դիտական աշխատություններ», հ. 37, 1 մաս, էջ 86:

АРМЯНСКАЯ ДИАЛЕКТОЛОГИЯ И ВОПРОС О ПРОИСХОЖДЕНИИ
АРМЯНСКИХ ДИАЛЕКТОВ

Г. Б. ДЖАУКЯН

(Р е з ю м е)

На современном этапе развития арменистики перестали быть спорными положения о том, что в V веке существовали более или менее заметные диалектные различия и что в современных армянских диалектах есть отдельные черты, архаичнее соответствующих черт габара (древнеармянского литературного языка). Спорным является лишь вопрос о том, существовали ли в V веке уже в оформленном виде все, или хотя бы основные, группы современных армянских диалектов со своими основными фонетическими и лексико-грамматическими особенностями, или как таковые они оформились лишь после X—XI вв. Первой точкой зрения, в свое время высказанной К. Патканяном в эпоху зарождения научной армянской диалектологии и в дальнейшем без проверки поддержанной академиком Н. Я. Марром и его последователями, фактически придерживается и проф. А. С. Гарибян, но уже в эпоху, когда армянская диалектология добилась значительных успехов в области изучения современных армянских диалектов. Однако концепция проф. Гарибяна, несмотря на заслуги этого ученого в области армянской диалектологии, является ошибочной и не выдерживает серьезной научной критики.

Общие недостатки концепции проф. Гарибяна заключаются в следующем. 1) В этой концепции эклектически переплетены несовместимые понятия и принципы; в частности, марровское понимание исторического процесса „сочетается“ с принципами сравнительно-исторического языкознания. 2) Проф. Гарибян не достигает четкого историзма: он не только рассматривает исторически последовательные этапы развития армянского языка (древнеармянский, среднеармянский, новоармянский) и его диалектные разветвления оторванно друг от друга, как совершенно независимые языковые единицы, но и в чисто шлейхеровском духе „устанавливает“ у языков и диалектов период образования системы, период существования системы в неизменном виде и период разложения системы. 3) Свои выводы проф. Гарибян основывает не на разностороннем изучении армянских диалектов, а лишь на одностороннем и неправильном освещении передвижений согласных, причем совершенно не пытается выяснить соотношения морфологической и фонетической классификаций, прибегая то к той, то к другой. 4) Проф. Гарибян обходит молчанием факты, находящиеся в явном противоречии с его концепцией. Так, например, он оставляет без внимания тот известный факт, достаточный для опровержения всей его концепции, что форманты *čr* и *-nčf*, характеризующие основные группы современных армянских диалектов, ни разу не встречаются в текстах до XII—XIII вв.

1) Говоря о наличии в некоторых армянских диалектах всех четырех ступеней индоевропейских согласных, проф. Гарибян умалчивает о том, что между индоевропейским праязыком и упомянутыми армянскими диалектами в этом отношении нет точных соответствий: в первом — противопоставление простых звонких и звонких придыхательных имеет фонематический характер и не зависит от их позиции в слове, между тем как в этих диалектах наличие тех или других находится в строгой зависимости от их позиции — простые звонкие не встречаются в начале слов индоевропейского происхождения и в заимствованиях до XII в. 2) Проф. Гарибян, абсолютизируя передвижения согласных в армянских диалектах, рассматривает их в отрыве от слов, конкретных носителей этих изменений, в отрыве от других изменений в словах, в том числе и от изменений гласных, придающих диалектным словам наиболее специфичный характер; между тем, если учесть все эти изменения, то станет ясным, что слова грабара по своему фонетическому облику в основном ближе к индоевропейским праформам и источникам заимствований, чем слова диалектов, и что последние в большинстве случаев можно возвести к этим праформам лишь через формы, засвидетельствованные в памятниках грабара. 3) Проф. Гарибян не учитывает в достаточной степени ни различий между говорами одних и тех же диалектов, ни переходных явлений. 4) Делая ударение на различия между диалектами и грабаром, он почти не учитывает общих черт. Наконец, проф. Гарибян рассматривает фонетические явления в отрыве от других сторон языкового строя.

Не говорит в пользу концепции проф. Гарибяна сравнительный анализ данных грамматического строя грабара, диалектов и индоевропейского праязыка. 1) Система склонения в грабаре продолжает быть флективной, между тем как диалекты в этом отношении дальше отошли от индоевропейского праязыка, превращая эту систему в агглютинативную. 2) Грабар в основном сохранил индоевропейские тематические гласные, между тем как диалекты унифицировали основы. 3) В грабаре много следов индоевропейских чередований, между тем как в диалектах их почти не осталось. 4) Формы спряжения в грабаре ближе к индоевропейским праформам, чем соответствующие формы диалектов. 5) В отношении синтаксических особенностей грабар явно более древен, чем диалекты. 6) В грабаре сохранилось больше индоевропейских корней и суффиксов, чем во всех диалектах вместе взятых.

Вопрос о происхождении диалектов армянского языка можно решить лишь в связи с вопросами происхождения и развития армянского языка вообще. Различая древнеармянский (V — VI вв.), среднеармянский (XII — XVI вв.) и новоармянский (XVIII — XX вв.) периоды истории армянского языка, автор статьи считает, что историю армянских диалектов можно рассмотреть лишь в связи с этими периодами, выделяя древнеармянские, среднеармянские и новоармянские диалекты. Различия между древнеармянскими диалектами были преимущественно

фонетико-лексическими. С XII в. начинают преобладать морфологические различия, которые вместе с растущими различиями в фонетическом строе и в лексике, в конце среднеармянского периода приводят к состоянию, известному по последним диалектологическим работам. Можно сказать, что процесс образования *фонетических, грамматических и лексических особенностей армянских диалектов происходил в течение всей истории армянского языка, усиливаясь, ослабляясь и даже прекращаясь в различных исторических условиях* давая разные диалектные группировки.